Յ Ե. ՎԱՐԳԱ

# ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ ՆՈՐ ՃԳՆԱԺԱՄԻ ՇԵՄՔԻՆ

ՊԵՏՀՐԱՏ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ • 1938

31 JAN 2018

ՅԵ. ՎԱՐԳԱ

# ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ ՆՈՐ ՃԳՆԱԺԱՄԻ ՇԵՄՔԻՆ




ՊԵՏՀՐԱՏ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ • 1938

Е. ВАРГА

# КАПИТАЛИСТИЧЕСКИЙ МИР НА ПОРОГЕ НОВОГО КРИЗИСА

Армгиз—Издательство политл. литературы
Ереван, 1938

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀԱՄՄԱՐ
11-28458դ

1938 թ. սկզբներին կապիտալիստական աշխարհը դեմ-հանդիման կանգնեց տնտեսական նոր ճգնաժամի առջև: Կապիտալիստական ամենից հարուստ ու հզորավոր յերկրում—ԱՄՆ-ում—ճգնաժամն արդեն պայթել է և ընդամենը՝ պայթել է անսովոր ուժգնությամբ. մյուս յերկրներում նա հասունանում է այժմ:

Մեզ համար տնտեսական այս նոր ճգնաժամն անսպասելի բան չի հանդիսանում: Վերջին հարյուրամյակի պատմությունը ցույց է տալիս, որ դերարտադրության ճգնաժամերը կապիտալիզմի որով կանոնավոր կերպով կրկնվում են որոշ ժամանակամիջոցների ընթացքում: Սկզբներում ճգնաժամերը լինում եյին այն ժամանակ կապիտալիստորեն լիովին զարգացած միակ յերկրում—Անգլիայում: Այդպիսիներն են 1825 և 1836 թ. թ. ճգնաժամերը[1]: Յեվ միայն սկսած 1847 թվականից է, որ կարելի յե խոսել համաշխարհային տնտեսական ճգնաժամերի մասին:

---

1 «Միայն սկսած այն ժամանակից, յերբ մեխանիկական արդյունաբերությունն այնքան խոր արմատներ արձակեց, որ նա սկսեց դերիշխող ազդեցություն գործել ազգային արդյունաբերության վրա, յերբ նրա շնորհիվ՝ արտաքին առևտուրը սկսեց դերակշռել ներքին առևտրին, յերբ համաշխարհային շուկան իր համար վիթխարի ասպարեզներ բաց արեց Ամերիկայում, Ասիայում, Ավստրալիայում, յերբ, վերջապես, իրար հետ մրցության մտած արդյունաբերական ազգերը բավականաչափ բազմաքանակ դարձան,—միայն սկսած այն ժամանակից հանդես յեկան դարձյալ ու դարձյալ կրկնվող այն բոլոր ցիկլերը, որոնց հաջորդական փուլերն ընդգրկում են տարիներ, և որոնք ամեն անգամ տանում են դեպի համընդհանուր ճգնաժամը, որն ավարտում է մի ցիկլը և սկզբնավորում է նորը» (Մարքս, Կապիտալ, հ. I, եջ 540—541, Համ. կ(բ)կ կկ կուսհրատ, 1936 թ.):

Համաշխարհային տնտեսական ճգնաժամերը[1] տեղի են ունեցել հետևյալ թվականներին. 1847, 1857, 1866, 1873, 1882, 1890, 1900, 1907, 1920, 1929: Այսպիսով, համաշխարհային տնտեսական ճգնաժամերը կրկնվում են յուրաքանչյուր 7—10 տարին անց. միայն 1907 և 1920 թ. թ. ճգնաժամերի միջև կա 13 տարվա ժամանակամիջոց: Համաշխարհային պատերազմն ընդհատեց կապիտալիստական արտադրության ցիկլային ընթացքը: 1914 թ. արդեն զգացվում եր ճգնաժամի մոտեցումը: Սակայն նա այն ժամանակ չպայթեց: Համաշխարհային պատերազմի ստեղծած վիթխարի ավելադիր պահանջմունքը զանազան ապրանքների վերաբերմամբ՝ արտադրության նվազման հետ միասին, մի նվազում, վոր հետևանք եր պատերազմի համար միլիոնավոր բանվորներին զորակոչի յենթարկելուն, հնարավորություն չտվեց դերարտադրության ճգնաժամի արտահայտմանը և նույնիսկ առաջացրեց ապրանքների պակասություն: Միայն պատերազմը վերջանալուց հետո արտադրության կապիտալիստական յեղանակի ցիկլային ընթացքը վերսկսվեց: Յեվ, քանի վոր կապիտալիզմի զարգացմամբ ցիկլի տևողությունը, այսինքն՝ յերկու տնտեսական ճգնաժամերի միջև յեղած ժամանակամիջոցը ցուցաբերում է կրճատման տենդենց (այս յերևույթի պատճառների մասին մենք խոսելու յենք ստորև), ապա նոր ճգնաժամի ծագումը կարելի յեր նախատեսել:

Պարբերաբար կրկնվող տնտեսական ճգնաժամերը՝ դա կապիտալիզմի յերկրների աշխատավորների համար սոսկալի մի աղետ է: Տասնյակ միլիոններով բանվորներ ու ծառայողներ մնում են առանց մի կտոր հացի: Միլիոնավոր մանր գյուղացիներ, արհեստավորներ և մանր առևտրականներ, մանր ու միջակ կապիտալիստների ամբողջ շերտեր քայքայվում են: Ճգնաժամեր չգիտե միայն մի յերկիր—մեր հայրենիքը, Խորհրդային Միությունը: Անճգնաժամ զարգացումը սոցիալիզմի՝ կապիտալիզմի հանդեպ ունեցած առավելության ամենացայտուն ցուցանիշն է: Կապիտալիստական յերկրներում էլ լինում են տարիներ, յերբ արտադրության ծավալը 10–15%-ով է աճում: Բայց այդ շատ կարճ է տևում: Անխուսափելի ճգնաժամը արտադրությունը նորից շատ տարիներով հետ է շպրտում: Խորհրդային Միության մեջ արտադրության վերելքը անընդհատ է: Հենց վերելքի այս անընդհատությունն է, և վոչ միայն նրա զարգացման բարձր տեմպը, վոր և հանդիսանում է խորհրդային տնտեսության վճռողական տարբերությունը կապիտալիստականից:

Զարմանալի չէ, վոր բուրժուական «գիտությունը» ձգտում է քողարկել աշխատավոր մասսաների առջև սոցիալիզմի ունեցած այս առավելությունը կապիտալիզմի վերաբերմամբ: Նա Խորհրդային Միության մեջ ճգնաժամերի բացակայությունը բացատրում է վոչ թե սոցիալիզմի նոր սիստեմի եությամբ ու առավելություններով, այլ տնտեսության պլանային բնույթով: Կապիտալիզմի որով էլ—ասում են բուրժուական գիտնականները—կարելի կլիներ խուսափել ճգնաժամերից. բավական է միայն մտցնել պլանային տնտեսություն: Ահա թե ինչով են բացատրվում վերջին տասնամյակում՝ տնտեսական պլանավորման վերաբերյալ բուրժուական գրականության բուռն աճումը և բազմաթիվ «տնտեսական պլանների» ծագումը (դե Մանի՝ «Աշխատանքների պլանը», ռուզվելտյան «Նիրա»-ն կամ «Արդյունաբերության վերականգնման ազգային ադմինիստրացիան», Գյորինգի՝ «չորսամյա պլանը» և այլն):

Ուստի և, նախքան նոր ճգնաժամի մասին խոսելը, մենք անհրաժեշտ ենք համարում ցույց տալ, թե ինչու կապիտալիզմի ժամանակ ճգնաժամերն անխուսափելի են, և թե ինչու տնտեսական պլանավորման բնագավառից վերցրած վոչ մի եքսպերիմենտ այստեղ վոչինչ չի կարող փոխել: Ինքնըստինքյան հասկանալի է, վոր այս աշխատու-

---

1 Համաշխարհային տնտեսական ճգնաժամ ասելով մենք հասկանում ենք, դերարտադրության ճգնաժամերի զուգադիպումն ըստ ժամանակի, տվյալ ժամանակում վճռողական կապիտալիստական յերկրներում: Վորքան վոր ճգնաժամերն առանձին յերկրներում յերբեք միաժամանակ չեն սկսվում, վերը բերվող տվյալներով համաշխարհային տնտեսական ճգնաժամեր վորոշ տարիներին վերաբերելը վորոշ չափով հանդիսանում է կամայական:

թյան սահմանափակ ծավալի պատճառով մենք կարող կլինենք կանգ առնել միայն ամենակարևոր մոմենտների վրա:

## ԻՆՉՈՒ՞ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՈՐՈՎ ԱՆԵՌԱՍԱՓԵԼԻ ՅԵՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԵՐԸ

Վորպեսզի բավարար կերպով պատասխանենք այս հարցին, անհրաժեշտ է անալիզի յենթարկել կապիտալիստական հասարակակարգի այն կարևորագույն առանձնահատկությունները, վորոնք տարբերում են նրան ինչպես արտադրության նրան նախորդող յեղանակից, այնպես և սոցիալիզմից:

Աղքատություն ապրանքների առատության հետևանքով—ահա կապիտալիստական հասարակակարգի առանձնահատկությունը: Առաջվա հասարակական ֆորմացիաները գիտեին աղքատություն՝ բարիքների պակասության պատճառով: Տարերային աղետները—յերաշտը, մորեխի արշավանքը, հեղեղները—սով ու մասսայական մահացում էին առաջ բերում: Բայց կապիտալիզմից առաջ բարիքների լիությունը յերբեք դժբախտություն չեր հանդիսանում մարդկության համար: Այդ բանը յերբեք չի կարող լինել նաև սոցիալիզմի ժամանակ:

Արտադրության կապիտալիստական յեղանակի այն կարևորագույն առանձնահատկությունները, վոր հնարավոր և անխուսափելի յեն դարձնում գերարտադրության ճգնաժամերը, կայանում են հետևյալում.

ա) Կապիտալիզմը, ինչպես և նախորդող բոլոր հասարակական ֆորմացիաները, բացառությամբ նախնադարյան կոմունիզմի՝ իրենից ներկայացնում է շահագործման վրա հիմնված դասակարգային հասարակություն: Կապիտալիզմի որով արտադրության միջոցները կազմում են բուրժուազիայի, կապիտալի մասնավոր սեփականությունը: Անմիջական արտադրողների—պրոլետարների—հսկայական մասսան, ճիշտ է, ազատ է, բայց վոչ մի սեփականություն չունի և կարող է գոյություն ունենալ իր բանվորական ուժը վաճառելով միայն: Կապիտալիզմը տարբերվում է



տնտեսության ստրկատիրական սիստեմից, վորի որով արտադրության միջոցները և բանվորական ուժը կազմում են ստրկատերերի մասնավոր սեփականությունը. նա տարբերվում է ֆեոդալիզմից, վորի որով հիմնական արտադրողական ուժը—ճորտերը—թեև ամրացված է հողին, բայց աշխատում է արտադրության իր սեփական միջոցների ոգնությամբ և իր աշխատանքի արդյունքների մի մասը (նատուրալ ձևով) հանձնում է կալվածատիրոջը:

բ) Կապիտալիզմի որով բոլոր բարիքները և անգամ մարդկանց միջև յեղած տնտեսական հարաբերությունները ապրանքային ձև են ընդունում: Ամեն ինչ արտադրվում է «շուկայի» համար: Բոլոր պրոդուկտները պետք է վաճառվեն («իրացվեն») շուկայում: Բոլոր պրոդուկտները շուկայում պետք է անցնեն ապրանքային ձևից փողային ձևի վերածվելու պրոցեսը: Մարդու բանվորական ուժը, ինքը բանվորը, ապրանք է դառնում. նրա տարբերությունը մնացած բոլոր ապրանքներից կայանում է, ինչպես Մարքսն է ասում, նրանում, վոր նա ինքն է հարկադրված լինում իր կաշին շուկա տանելու:

գ) Կապիտալիստական արտադրության նպատակը—ի տարբերություն սոցիալիստականից—հանդիսանում է վոչ թե մարդկային պահանջմունքների ըստ հնարավորության ավելի լիակատար բավարարումը, այլ արժեքի անումը, հավելյալ արժեքի յուրացումը, շահույթը: Վորքան էլ մեծ լինի պրոդուկտների պահանջմունքը, միևնույն է—կապիտալիստը կազմակերպում է արտադրությունը, յեթե այդ արտադրությունը նրան շահույթ չի տալիս: Սրանով է տարբերվում արտադրության կապիտալիստական յեղանակը նախորդող բոլոր դասակարգային հասարակություններից, վորոնցում արտադրությունը առաջին հերթին նպատակ է ունեցել բավարարել իշխող դասակարգերի պահանջմունքները[1]:

---

1 Վորոշ սահմանափակ ապրանքաշրջանառություն տեղի ունի նաև նախակապիտալիստական հասարակական ֆորմացիաներում: Այնտեղ էլ գոյություն ունի շուկա, վորտեղ պրոդուկտների ավելցուկը, վորը գերազանցում է նրանց արտադրողի սեփական պահանջմունքներից, փո-

Կապիտալիստական հասարակակարգի այս առանձնահատկություններն անխզելիորեն կապված են միմյանց հետ: Այս առանձնահատկությունների անալիզը ցույց է տալիս, որ կապիտալիստական հասարակակարգն իր մեջ բազմաթիվ ներքին հակասություններ է պարունակում: Կապիտալիզմի հիմնական այն հակասությունը, որից բղխում են բոլոր մյուսները, արտադրության հասարակական բնույթի և յուրացման մասնավոր բնույթի միջև յեղած հակասությունն է: Սա նշանակում է, որ կապիտալիզմի ժամանակ արտադրությունը հասարակական բնույթ է կրում:

«Արտադրության սահմանափակ միջոցները վերածելով արդի հսկայական արտադրողական ուժերի՝ բուրժուազիան չեր կարող դրա հետ մեկտեղ չդարձնել նրանց մասնավորից հասարակական արտադրամիջոցների, որոնք գործողության մեջ են դրվում շատ մարդկանց ջանքերով միայն: Ինքնաշարժ ճախարակի, ձեռնաշխատ մանածագործական դաղդյահի, դարբնի մուրճի փոխարեն հանդես յեկան մանող մեքենաներ, մեխանիկական մանածագործական դաղդյահը, շոգեշարժ մուրճը· փոքրիկ արհեստանոցների փոխարեն՝ հսկայական գործարաններ, որոնք կարիք ունեն հարյուրավոր ու հազարավոր բանվորների միացյալ աշխատանքի: Արտադրության միջոցների նման՝ արտադրությունը ինքն եվ վերածվեց անջատ-անջատ միավորների ջանքերի շարքից հասարակական գործողությունների շարքի, իսկ պրոդուկտներն առանձին անձի արդասիքից վերածվեցին ամբողջ հասարակության արդասիքի: Այժմ ֆաբրիկաներից ու գործարաններից դուրս յեկող մանվածքները, գործվածքները, մետաղե ապրանքներն իրենցից ներկայացնում են բազմաթիվ բանվորների աշխատանքի արդյունք—բանվորների, որոնք հերթով կիրառել են այդ ապրանքների նկատմամբ իրենց ջանքերը՝ նախքան նրանց վերջնական ձև տալը: Վոչ վոք առանձին վերցրած՝ չի կարող ասել նրանց մասին· «սա յես եմ պատրաստել, սա իմ պրոդուկտն է»[1]:

Բայց պրոդուկտներն արտադրվում են վոչ թե հասարակության համար· արտադրության անմիջական նպատակը վոչ թե հասարակության պահանջմունքների բավարարումն է, այլ շահույթի յուրացումը: Կապիտալիզմի հիմնական հակասությունը, հակասություն արտադրության հասարակական բնույթի և յուրացման մասնավոր բնույթի միջև—ահա դերարտադրության պարբերական ճգնաժամերի անխուսափելիության հիմունքը, հիմնական պատճառը:

Բայց մատնանշված հակասությունը հանդիսանում է բոլոր ճգնաժամերի միայն ընդհանուր հիմնական պատճառը, և վոչ թե առանձին ճգնաժամերի անմիջական, կոնկրետ պատճառը: Հասարակական արտադրության ու կապիտալիստական յուրացման միջև յեղած հիմնական հակասությունը՝ դա պերմանենտ հակասություն է, որը մշտապես գոյություն ունի· յեթե նա լիներ ճգնաժամի անմիջական պատճառը, ապա և ճգնաժամն եվ կլիներ պերմանենտ: Այնուամենայնիվ պերմանենտ ճգնաժամեր չեն լինում· այս բանը Մարքսն արդեն վաղուց հաստատել է: Կապիտալիստական արտադրությունը ցիկլերով է շարժվում, ամեն մի ցիկլը մի քանի ֆազ ունի: Ճգնաժամին, կապիտալիզմի բոլոր հակասությունների այս սուր պայթմանը, հաջորդում է «հանդստի վիճակը՝ անցկացրած ճգնաժամից հետո»—ինչպես Մարքսն է արտահայտվում, կամ դեպրեսիայի ֆազը· ապա՝ աշխուժացումը, վերելքը և, վերջապես, ծաղկումը, որն անխուսափելիորեն տանում է դեպի նոր ճգնաժամը: Վորպեսզի ցույց տանք ճգնաժամերի անխուսափելիությունը, պետք է բացատրել, թե ինչու վերելքի ֆազերը չեն կարող մշտապես շարունակվել, թե ինչու նրանք անխուսափելիորեն տանում են դեպի նոր ճգնաժամեր ա-

---

խանակվում է այլ պրոդուկտների հետ: Բայց միայն կապիտալիզմի որով է, որ աշխատանքի բոլոր պրոդուկտները և բուն իսկ բանվորական ուժը ստանում են ապրանքային ձև: Միայն կապիտալիզմի որով է, որ «չուվան» դառնում է տնտեսական կյանքի «կանոնավորիչը», որի միջոցով պետք է անցնեն բոլոր պրոդուկտները, նախքան իրենց սպառողներին հասնելը:

1 Ենգելս, Անտի-Դյուրինգ, եջ 192—193, Համկ(բ)կ ԿԿ կուսհրատ, 1934 թ.:

ռաջանալը: Այս բանը կարելի է բացատրել տարբեր յեղանակներով, բայց ամենից պարզ կլինի յելնել կապիտալիստական շուկայի անալիզից: Այս ճանապարհը մեզ մատնանշում է Մարքսն ինքը: Նա գրում է.

«Այն փաստը, վոր ապրանքային արտադրությունը հանդիսանում է կապիտալիստական արտադրության ընդհանուր ձևը... ստեղծում է վորոշ, արտադրության այդ յեղանակին հատուկ, փոխանակության նորմալ պայմաններ, հետևաբար, ինչպես պարզ, այնպես և ընդլայնված մասշտաբով վերարտադրության նորմալ ընթացքի պայմաններ,—պայմաններ, վորոնք վերածվում են վերարտադրության անորմալ ընթացքի նույնքան բազմաթիվ պայմանների, ճգնաժամերի նույնքան բազմաթիվ հնարավորությունների, վորովհետև հավասարակշռությունն ինքն իսկ — այդ արտադրության տարբերայնորեն կազմավորված կարգում—հանդիսանում է պատահականություն»[1]:

## ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՇՈՒԿԱՆ ՅԵՎ ՃԳՆԱԺԱՄԵՐԸ

Բուրժուական տնտեսագետները ճգնաժամի պրոբլեմը հասկանալու կատարյալ անընդունակություն են յերևան բերում: «Շուկան» նրանց համար մի ինչ-վոր խորհրդավոր, քմահաճ բան է: Յերբեմն նա սահուն կերպով կլանում է ապրանքները և անգամ չի կարողանում կշտանալ նրանցով, բայց հանկարծ, առանց դրա համար վորևե հիմք ունենալու, նա անհնազանդում է, հրաժարվում է այն ապրանքներից, վոր տակավին յերեկ եր միայն, վոր այնքան ագահությամբ ձգտում եր ձեռք բերել: Բոլոր ապրանքները մեկեն դադարում են պահանջարկ գտնելուց. բունկվում է ճգնաժամը: Պարզ է, վոր շուկայի պրոբլեմը և ճգնաժամերի պրոբլեմն ըստ էության նույնական են:

Կապիտալիստական շուկան մնում է «գաղտնիքներով» լեցուն մինչև այն ժամանակ, քանի մենք նրան կքննենք մեկուսացած կապիտալիստական արտադրությունից՝ մի

1 Մարքս, Կապիտալ, հ. II, եջ 430, Համկ(բ)Կ ԿԿ Կուսհրատ, 1936 թ.: Ընդգծումը մերն է: Յե. Վ.:



տեղ կիտելով բոլոր ապրանքները առանց տարբերության: Իսկ յեթե վարվենք այնպես, ինչպես այդ առաջին անգամ արեց Մարքսը, և տարբերենք ապրանքները՝ համապատասխան արտադրության պրոցեսում և արժեքի աճման պրոցեսում նրանց ունեցած դերի, յեթե մեզ համար պարզենք, վոր նրանց վորպես թե անիմաստ շարժումը շուկայում վորոշվում է դասակարգային հարաբերություններով[1], ապա կապիտալիստական արտադրության ցիկլային ընթացքը հասկանալի կդառնա: Կաշխատենք ըստ հնարավորին ավելի պարզ կերպով շարադրել այս մեխանիզմը: Ըստվորում, հետևելով Մարքսի որինակին, մենք յենթադրում ենք,

ա) վոր շուկան զուտ կապիտալիստական է, այսինքն՝ վոր հասարակությունը բաղկացած է յերկու դասակարգից—բուրժուազիայից ու պրոլետարիատից. վոչ-կապիտալիստական տարրերին (գյուղացիներին, արհեստավորներին) մենք ավյալ դեպքում մի կողմն ենք նետում,

բ) վոր գոյություն ունի միասնական կապիտալիստական համաշխարհային շուկա. այսպիսով, մենք մի կողմն ենք թողնում աշխարհի բաժանումը առանձին պետությունների, առանձին «ազգային» շուկաների, մի կողմն ենք նետում ներքին ու արտաքին շուկաների միջև յեղած տարբերությունը:

Այժմ փորձենք վերցնել ապրանքների այն ամբողջ մասսան, վորը պետք է «իրացվի» շուկայում, այսինքն՝ պետք է վաճառվի այնպիսի գներով, վորոնք ապահովում են առնվազն միջին շահույթը, և այդ շահույթը բաժանենք մասերի:

Յեթե քննելու լինենք ապրանքները նրանց ունեցած սպառողական արժեքի տեսակետից, ապա նրանք բաժանվում են արտադրության միջոցների, վորոնք ծառայում են հետագա արտադրության համար՝ մեքենաները, հումքը

1 Մի տարում արտադրվող ապրանքային մասսայի շարժումը հասարակության դասակարգային բաժանման հիմունքով բացատրելու առաջին, ճիշտ է, դեռ շատ պրիմիտիվ փորձը XVIII դարում արել է Մարքսի կողմից բարձր գնահատվող ֆիզիոկրատ Կենեն իր՝ «Tableau économique»-ում:

և այլն, և սպառման միջոցների, վորոնք ծառայում են հասարակության անմիջական սպառման համար՝ կենսամթերքները, հագուստեղենը, կահույքը և այլն: Արտադրության միջոցները չեն կարող ուտվել. սպառման միջոցների ոգնությամբ չի կարելի նոր ապրանքներ արտադրել[1]: Արտադրության միջոցների և սպառման միջոցների բաժանումը բացարձակապես անհրաժեշտ է կապիտալիստական արտադրության ցիկլային ընթացքը հասկանալու համար: (Սպառման միջոցների մեջ կան ապրանքներ, վոր միայն կապիտալիստներն են դնում,—դա ամեն տեսակի պերճանքի առարկաներն են և այլ ապրանքները, վոր սպառում է նաև պրոլետարիատը: Սակայն, այս տարբերությունը մենք տվյալ դեպքում մի կողմն ենք թողնում):

Ասվածից հետևում է, վոր զանազան դասակարգերի մարդիկ տարբեր ապրանքներ են դնում: Արտադրության միջոցներ դնողները միայն կապիտալիստներն են: Կենսամթերքները դնում են թե՛ կապիտալիստները և թե՛ բանվորները:

Այժմ ճգնաժամերի պրոբլեմի համար ծագում է մի այսպիսի վճռողական հարց. յուրաքանչյուր տեսակի վո՞րքան ապրանքներ է կլանում շուկան: Կամ ավելի կոնկրետ. վո՞րքան արտադրության միջոցներ են դնում կապիտալիստները: Վո՞րքան սպառման միջոցներ են դնում կապիտալիստներն ու բանվորները՝ միասին վերցրած:

Այս հարցի պատասխանը, հարկավ, կարող է տրվել վոչ թե կոնկրետ թվերի ձևով, այլ կապիտալիստական հասարակության յեկամտի բաշխման անալիզի ձևով միայն՝ արտադրության հիման վրա:

Ըստ վորում՝ պետք է յելնել այն բանից, վոր արտադրության բոլոր միջոցները կազմում են բուրժուազիայի

[1] Ապրանքներից վոմանք կարող են ծառայել թե՛ վորպես արտադրության միջոց և թե՛ վորպես սպառման միջոց. այսպես, յեղը իրենից ներկայացնում է արտադրության միջոց, քանի նա գյուղատնտեսական աշխատանք է կատարում: Բայց յերբ նրան մորթում են, նրա միսը ծառայում է սպառման նպատակների: Սակայն, նմանորինակ դեպքերը վոչ մի չափով չեն փոխում մատնանշված բաժանումը:



սեփականությունը. պրոլետարները սեփականություն չունեն, չունեն յեկամտի սեփական աղբյուրներ: Նրանք վաճառում են իրենց բանվորական ուժը և յեկամուտ են ստանում բացառապես բուրժուազիայից աշխատավարձի ձևով. ըստ վորում՝ բանվորները բացի իրենց բանվորական ուժի արժեքից (այդ արժեքը մենք այստեղ յենթադրում ենք հավասար նրանց աշխատավարձին) պետք է արտադրեն նաև հավելյալ արժեք: Եթե դա չլիներ, կապիտալը յերբեք աշխատանք չեր տա բանվորներին: Հավելյալ արժեքը, վոր արտադրում են բանվորները, բայց իրեն է յուրացնում կապիտալը, մենք նշանակում ենք, ինչպես Մարքսի մոտ է, m տառով:

Կապիտալի այն մասը, վորը ծախսվում է բանվորական ուժ դնելու վրա, կոչվում է փոփոխական կապիտալ և, ինչպես հայտնի յե, մարքսիստական քաղաքատնտեսության մեջ նշանակվում է v տառով: Ամբողջ մնացած կապիտալը, վորը բաղկացած է արտադրության միջոցներից, հումքից, պատրաստի ապրանքներից և այլն, կոչվում է հաստատուն կապիտալ և նշանակվում է c տառով: Հաստատուն կապիտալն իր հերթին բաժանվում է նաև հիմնական ու շրջանառու կապիտալների: Մեքենաները, սարքավորումը, գործիքները, շենքերը—դա հիմնական կապիտալ է. նա արտադրական պրոցեսում գործում է մի քանի ժամանակաշրջանի ընթացքում և իր արժեքը փոխանցում է նրա միջոցով արտադրվող ապրանքներին միայն այն չափով, ինչ չափով նա մաշվում է: Հումքը, վառելանյութը և այլն՝ իրենցից ներկայացնում են շրջանառու կապիտալը. նա դառնում է նոր ապրանք, ինչպես, որինակ, բամբակը մանելու ժամանակ, կամ ընդհանրապես չքանում է, ինչպես ածուխը: Թե այս և թե մյուս դեպքում շրջանառու կապիտալն ամբողջությամբ իր արժեքը փոխանցում է արտադրվող նոր ապրանքի մեջ:

Համապատասխան արտադրության միջոցների և սպառման միջոցների միջև յեղած այս տարբերմանը՝ կապիտալիստական արտադրությունը բաժանվում է յերկու խոշոր ստորաբաժանումների՝ ստորաբաժանում I — արտադրու-

թյան միջոցների արտադրություն և ստորաբաժանում II—սպառման միջոցների արտադրություն: Սրանք մարքսիստական քաղաքականության անխնելի տարրերն են, վորոնք միանգամայն անհրաժեշտ են կապիտալիստական վերարտադրության պրոցեսը հասկանալու, կապիտալիստական չուկայի տարողությունը հասկանալու համար:

Արտադրական ժամանակաշրջանի, ասենք՝ մի տարվա սկզբում պատկերը հետևյալն է. ինչպես I ստորաբաժանման կապիտալիստները, այնպես և II ստորաբաժանման կապիտալիստները (սրանք և մյուսները միասին ներկայացնում են ամբողջ հասարակական կապիտալը) իրենց կապիտալի մի մասը զետեղեցին գործարանային շենքերի, մեքենաների մեջ. կապիտալի մի մասով նրանք գնում են հումք և ոժանդակ նյութեր. մյուս մասով նրանք գնում են բանվորական ուժ: Այնուհետև սկսվում է արտադրության պրոցեսը: Յեթե մի կողմը թողնենք հիմնական կապիտալի արժեքը, վորքան վոր այդ արժեքը պահպանվում է ապագայի համար ել, ապա յուրաքանչյուր ստորաբաժանման կողմից ել տարվա ընթացքում արտադրվող ապրանքների արժեքը կարտահայտվի հետևյալ ձևով.

Ստորաբաժանում I. $c_1$ (ոգտագործված մասում) $+v_1+m_1$
Ստորաբաժանում II. $c_2$ » » » $+v_2+m_2$

Այս ֆորմուլաներից յուրաքանչյուրը իրենից ներկայացնում է բացարձակ չափեր ունեցող վորոշ գումար, վորը տվյալ դեպքում միևնույն է, թե ինչ կլինի՝ միլիարդ դոլար, մարկ կամ ռուբլի: Կարևորն այն է, վոր բոլոր այս ապրանքները, վոր կազմում են առանձին կապիտալիստների սեփականությունը և արտադրվում են «անպլանային» կերպով, անարխիկորեն՝ պետք է իրենց համար գնորդներ գտնեն չուկայում: Միայն այն ժամանակ, յերբ բոլոր ապրանքներն իրենց համար գնորդներ կգտնեն, կապիտալիստական արտադրության նպատակը—արտադրության պրոցեսում ստեղծված հավելյալ արժեքի իրացումը, փողի ձևով—իրագործված է: Մենք արդեն գիտենք, վոր այս բանը վոչ միշտ է լինում: Ծաղկման ժամանակաշրջաններում «չուկան» ավելի մեծ քանակությամբ ապրանքներ է պահանջում, քան արտադրությունը կարողանում է տալ: Ընդհակառակը, ճգնաժամի ժամանակ բոլոր ապրանքները միանգամից դադարում են վաճառահանությունից:

Իսկ ի՞նչն է կապիտալիստական արտադրության ցիկլային ընթացքի պատճառը: Ինչո՞ւ յեն ճգնաժամեր տեղի ունենում:

Բուրժուական քաղաքատնտեսությունը ահա արդեն հարյուր տարի յե, ինչ ապարդյուն վորոնում է այդ հարցի պատասխանը: Բուրժուական տնտեսագետները սովորաբար այսպես են դատում.

Յերբ ապրանք է արտադրվում, ապա միաժամանակ արտադրվում է նաև գնողունակություն, արտադրվում է յեկամուտը՝ անհրաժեշտ այն բանի համար, վոր կարելի լինի այդ ապրանքը գնել: Ապրանքի գինը, այդ տնտեսագետների կարծիքով, կազմվում է հումքի, մեքենաների մաշվելու գնից, աշխատավարձից ու կապիտալիստների շահույթից: Հումքի գինը վճարում է կապիտալիստը: Այն, ինչ նա յե վճարում հումքի համար, կազմում է այլ անձերի յեկամուտը: Աշխատավարձը, վորը կապիտալիստն է վճարում, կազմում է բանվորների ու ծառայողների գնողունակությունը—յեկամուտը: Շահույթը՝ դա կապիտալիստների սեփական յեկամուտն է (մեքենաների մաշվածքի արժեքը գնում է նրանց ամորտիզացիայի վրա): Այսպիսով, կապիտալիստական հասարակության գնողունակությունը,—ժողովրդական յեկամուտը,—պետք է հավասար լինի տարվա ընթացքում արտադրվող նոր ապրանքների ամբողջ գնին: Ուստի և՝ չի կարող պատահել, վոր ապրանքներն իրենց համար գնորդներ չգտնեն: Ընդհանուր գերարտադրությունը անհնարին է: Ճգնաժամերի պատճառը կայանում է վոչ թե կապիտալիզմի եյուրյան մեջ, այլ «պատահական» հանգամանքների մեջ. միքանի ապրանքներ չափազանց շատ են արտադրված, մյուսները՝ չափազանց քիչ. տեղի յե ունեցել «անղուսպ սպեկուլացիա» և այլն: Ճգնաժամերից կարելի յե խուսափել կապիտալիստական պլանային տնտեսության միջոցով...

Ինչո՞ւմն է նմանորինակ դատողությունների անհեթեթությունը: Նրանում, որ նրանք նկատի չեն առնում արտադրվող ապրանքների արժեքը միայն, և ոչ թե նրանց նատուրալ ձևը. որ նրանք հաշվի են առնում գնողունակության ամբողջ գումարը, և ոչ դասակարգային հարաբերությամբ թելադրվող այդ գնողունակության բաշխումը: Կապիտալիստական հասարակության գնողունակությունը իրոք որ հավասար է c + v + m. Նա իրոք որ հավասար է յուրաքանչյուր տարի արտադրվող ապրանքների արժեքի գումարին: Բայց այս ընդհանուր ճշմարտությունը շատ քիչ է ոգնում չուկայի պրոբլեմի լուծմանը: Վճռողականը ոչ թե հասարակության գնողունակությունն է, այլ նրա «սպառողունակությունը» («потребительная способность»):

Հասարակության սպառողունակություն ասելով Մարքսը հասկանում է գնողունակության այն մասը, որը բանվորներն ու կապիտալիստները կարող են ծախսել սպառման միջոցների վրա, II ստորաբաժանման ապրանքների վրա: Այդ է վերջին հաշվով որոշում չուկայի տարողությունը ապրանքների բոլոր տեսակների վերաբերմամբ. չէ՞ որ կապիտալիստները արտադրության միջոցներ են ձեռք բերում միայն նրա համար, որպեսզի նրանց ոգնությամբ արտադրեն սպառման միջոցներ[1]: Ոչ մի կապիտալիստ չի սկսի կառուցել հրահալոց (доменная печь) նրա համար, որպեսզի հրճվի նրանից հոսող չուգունի տեսարանով՝ նման այն բանին, յերբ նա գոհարներ է գնում, որպեսզի

1 Մարքսն այսպես է պարզաբանում. «Կատարվում է անընդհատ շրջանառություն հաստատուն կապիտալի և հաստատուն կապիտալի միջև (մինչև իսկ մի կողմ թողնելով կուտակման արագացումը), որը առաջին պահին անկախ է անձնական սպառումից այն իմաստով, որ նա յերբեք նրա մեջ չի մտնում, բայց որը վերջին հաշվով սահմանափակված է անձնական սպառումով, որովհետև հաստատուն կապիտալի արտադրությունը, յերբեք չի կատարվում նրա իսկ համար. բայց կատարվում է միայն այն պատճառով, որ նա ավելի շատ սպառվում է արտադրության այն ճյուղերում, որոնց պրոդուկտները մտնում են անձնական սպառման մեջ»: (Մարքս, Կապիտալ, հ. III, էջ 274, Համ(բ)Կ ԿԿ Կուսհրատ, 1936 թ.):



հիանա նրանց վայելով: Ահա թե ինչու արտադրության միջոցների վաճառահանությունը վերջին հաշվով սահմանափակված է սպառման միջոցների վաճառահանությամբ: Յեթե սպառման միջոցները չեն գտնում գնորդներ, ապա ոչ մի կապիտալիստ չի սկսի գնել արտադրության միջոցներ սպառման նոր միջոցներ արտադրելու համար:

Վորքա՞ն է մեծ կապիտալիստական հասարակության սպառողունակությունը:

Սպառողունակությունը վորոշվում է բանվորների և կապիտալիստների յեկամուտով. նա հավասար է աշխատավարձ՝ v-ի ամբողջ գումարին և հավելյալ արժեք՝ m-ի ամբողջ գումարին: Կապիտալիստական հասարակությունը կարող եր տարեկան v + m ծախսել սպառման միջոցներ ձեռք բերելու համար:

Այո, նա կարող եր այդ ծախսել, բայց փաստորեն նա այդ չի կարողանում: Կապիտալիստները չեն կարողանում սպառել իրենց կողմից յուրացվող ամբողջ հավելյալ արժեքը: Նրա մի մասը նրանք պետք է կուտակման վերածեն: Կապիտալիստների միջև յեղած մրցությունը նրանց հարկադրում է շահույթի մի մասը գործադրել արտադրության մեթոդները բարելավելու վրա, հիմնական կապիտալի մեջ ներդրումներ անելու վրա, նոր սարքավորում ձեռք բերելու վրա: Նա, ով այդ բանը չի անում, արտադրության ծախքերը գերազանցում են միջին մակարդակից, նա սնանկանում է: Հասարակության սպառողունակությունը ստանում է, հետևաբար, այսպիսի արտահայտություն.

$$v + (m - a),$$

այսինքն, աշխատավարձի գումարը պլյուս հավելյալ արժեքի գումարը՝ հանած կուտակումը:

Բայց կապիտալի կուտակումը անխուսափելիորեն այն բանին է բերում, որ v հարաբերականորեն—արտադրվող ապրանքների ամբողջ արժեքի համեմատությամբ—շարունակ նվազում է: Վորքան կապիտալի մեծ մասն է գնում կուտակման համար, այնքան ավելի յեն կիրառվում մեքենաներ, այնքան ավելի յեն կատարելագործված այդ մեքե-





11-28458

նաները, այնքան ավելի քիչ բանվորական ժամանակ է պահանջվում ապրանքի մի միավոր պատրաստելու համար, այնքան—հարաբերականորեն—ավելի յե դառնում հաստատուն կապիտալը և պակաս՝ փոփոխական կապիտալը: Կամ դասակարգային հարաբերակցությունների տեսակետից՝ բանվոր դասակարգի բաժինը կապիտալիստական հասարակության կողմից արտադրվող նոր արժեքի մեջ չարունակ նվազում է, պրոլետարիատը շարունակ ավելի յե աղքատանում: Բայց այդ նշանակում է, որ հասարակության սպառողունակությունը, համեմատած արտադրության աճման հետ, չարունակ նվազում է: Ցեվ որովհետև վերջին հաշվով՝ ամբողջ գնողունակությունը վորոշողը սպառողունակությունն է, այսինքն՝ սպառման միջոցների վաճառահանումը, ապա պարզ է, որ շուկան չի կարող անսահման անհիվանդագին կերպով կլանել արտադրվող ապրանքները: Մարքսը պարզ ու հստակ ձևակերպում է այս:

Հասարակության սպառողական ուժը «վորոշվում է վոչ թե բացարձակ արտադրողական ուժով և վոչ էլ բացարձակ սպառողունակությամբ,—գրել է Մարքսը, այլ սպառողունակությամբ, հիմնված բաշխման անտագոնիստական հարաբերությունների վրա, վորոնք հասարակության հակայական մասսաների սպառումը իջեցնում են մինիմումի, վորը փոփոխվում է միայն ավելի կամ պակաս նեղ սահմաններում: Նա այնուհետև սահմանափակված է կուտակելու ձգտումով, կապիտալը մեծացնելու ձգտումով և ընդլայնված մասշտաբով հավելյալ արժեք արտադրելու ձգտումով: Այսպես է կապիտալիստական արտադրության որենքը,—մի որենք, վորը թելադրում են արտադրության իսկ մեթոդներում կատարվող մշտական հեղափոխությունները, յեղած կապիտալի արժեքազրկումը մշտապես ուղեկցող այդպիսի հեղաշրջումները, համընդհանուր մրցման պայքարը, արտադրությունը կատարելագործելու և նրա մասշտաբն ընդլայնելու անհրաժեշտությունը՝ ի սեր սոսկ միայն պահպանման և կործանման սպառնալիքի տակ: Ուստի և, շուկան պետք է շարունակ ընդլայնվի, այնպես, վոր շուկայական հարաբերությունների փոխադարձ կախվածությունը և այն վորոշող պայմանները շարունակ ավելի ու ավելի ստանում են արտադրողներից կախումն չունեցող բնական որենքի բնույթ, շարունակ ավելի ու ավելի յեն սպրդում վերահսկողությունից»[1]:

Բանվոր դասակարգի աղքատացումը, մասսաների պրոլետարական դրությունը—մի կողմից, ինչպես արտահայտվում է Լենինը, կապիտալիստների կողմից յուրացվող հավելյալ արժեքի մի մասի վերածումը կուտակման,—մյուս կողմից՝ չարունակ ավելի յե նեղացնում կապիտալիստական հասարակության սպառողունակությունը նրա արտադրողունակության (производительная способность) համեմատությամբ և պարբերաբար առաջացնում է շուկայի անխուսափելի գերլցում ապրանքներով, այսինքն՝ գերարտադրության ճգնաժամեր:

Հասարակության սահմանափակ սպառողունակության և կապիտալի անսահման ընդլայնման ձգտման միջև յեղած հակասությունը,— մի հակասություն, վորն առաջանում է ամենից առաջ մասսաների պրոլետարական վիճակով,—անխուսափելիորեն պետք է տանի դեպի գերարտադրության պարբերաբար կրկնվող ճգնաժամերը:

«Բոլոր իրական ճգնաժամերի վերջին պատճառը մնում է, այնուամենայնիվ, մասսաների աղքատությունն ու ըսպառման սահմանափակ լինելը, համեմատած կապիտալիստական արտադրության տենդենցի հետ՝ զարգացնելու արտադրողական ուժերն այնպիսի ինտենսիվությամբ, կարծես թե այդ ուժերի սահմանը հանդիսանում է հասարակության միայն բացարձակ սպառողունակությունը»[2]:

Ահա թե ինչու վոչ մի պլանային տնտեսություն, վոչ մի կառավարական միջոցառում չեն կարող խանգարել գերարտադրության ճգնաժամերի պարբերական կրկնությունը կապիտալիզմի որով:

---

1 Մարքս, Կապիտալ, հ. III, էջ 220, Համկ(բ)Կ Կուսհրատ. 1936 թ.: Ընդգծումը մերն է:—Ցե.Վ.:

2 Նույն տեղում, էջ 429: «Բացարձակ սպառողունակություն» ասելով Մարքսը հասկանում է սպառողունակությունը կապիտալիզմի կապանքներից ազատագրված սոցիալիստական հասարակության մեջ:

Կապիտալիստական հասարակության այդ խոկ ներքին օրենքները, վորոնք անխուսափելիորեն առնում են դեպի բոլոր հակասությունների պարբերականորեն կրկնվող արտահայտումը դերարտադրության ճգնաժամի ձևով, նաև վորոշում են կապիտալիստական հասարակակարգի անխուսափելի խորտակումը, նրա տապալումը պրոլետարական հեղափոխության միջոցով: Հենց այս է պատճառը, վոր բուրժուական քաղաքատնտեսությունը, այդ թվում նաև ռեֆորմիստական տեսաբանները, ինչպես Կաուցկին, Հիլֆերդինգն ու Ոտտո Բաուերը[1], չեն համաձայնվում ճգնաժամերի մարքսյան թեորիայի հետ: Վորովհետև այդ կնչանակեր կապիտալիզմն ընդունել վոչ թե հավիտենական, այլ պատմականորեն անցողական մի հասարակական ձև: Իսկ հենց այս բանն է, վոր չեն ուզում ընդունել կապիտալիզմի պաշտպանները. չեն ուզում; չնայած այն բանին, վոր արդեն 20 տարի յե, ինչ յերկրագնդի մեկ վեցերորդ մասում գոյություն ունի տնտեսության սոցիալիստական սիստեմը—Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը:

## ԻՆՉՈՒ ՅԻԿԼԵՐ, ՅԵՎ ՎՈՉ ԹԵ ՊԵՐՄԱՆԵՆՏ ՃԳՆԱԺԱՄ

Մենք տեսանք, թե ինչու ժամանակ առ ժամանակ անխուսափելի յեն ճգնաժամերը, թե ինչու շուկան պարբերաբար չափազանց գերլցված է լինում ապրանքներով: Բայց ի՞նչպես է հաղթահարվում ճգնաժամը: Ինչո՞ւ յեն ճգնաժամին դարձյալ հաջորդում դեպրեսիա, աշխուժացում, վերելք: Ճգնաժամի հաղթահարումը հետևյալ կերպ է տեղի ունենում.

1 Կաուցկին, Հիլֆերդինգը և Ոտտո Բաուերը, աղավաղելով Մարքսի ուսմունքը, պնդում են, վոր իբրև թե հնարավոր է կապիտալիստական անճգնաժամ վերարտադրությունը: Սրա համար պահանջվում է միայն, վոր բոլոր ապրանքները արտադրվեն շուկայի համար ցանկալի պրոպորցիայով: Նրանք նախապես աղավաղում են Մարքսի ուսմունքն այն մասին, վոր մասսաների պրոլետարական դրությունը և կապիտալի կուտակումը անխուսափելիորեն ծնում են դիսպրոպորցիոնալություն և առնում են դեպի ճգնաժամ:



ա) բոլոր ապրանքների գները արտադրեն ընկնում են, վորի շնորհիվ միևնույն իսկ փողային յեկամտով կարելի յե գնել արդեն նշանակելիորեն մեծ քանակությամբ ապրանքներ.

բ) ավելորդ ապրանքների մի մասը փչանում է կամ վոչնչացվում.

գ) II ստորաբաժանման արտադրությունը այնքան ուժեղ է կրճատվում, վոր արտադրվող ապրանքների գների գումարը ավելի պակաս է դառնում, քան հասարակության—հավասարապես ուժեղ կրճատված—սպառողունակությունը:

Այստեղ մի հարց է ծագում, թե վո՞րտեղից է վերցվում սպառողունակությունը, յեկամուտը, յեթե արտադրություն չկա:

Ինչ կապիտալիստներին է վերաբերում, ապա, թեև նրանց յեկամուտը սաստիկ կրճատվում է ճգնաժամի ժամանակ, թեև նրանք էլ չեն կարողանում նոր կապիտալ կուտակել, բայց ընդհանրապես նրանք մնում են բավականաչափ հարուստ, վորպեսզի շարունակեն իրենց անձնական սպառումը առաջվա ծավալով: Նմանապես և «միջին շերտերն» իրենց ֆիքսացված վաստակով. պետական ու կոմունալ չինովնիկները, բարձր վարձատրություն ստացող ծառայողները և այլն, պահպանում են իրենց յեկամուտը. այդ յեկամուտը պահպանում է նաև աշխատանքում մնացած բանվորների ու ստորին ծառայողների մի մասը: Գործազուրկներն ուտում են իրենց փոքր խնայողությունները, վաճառում են իրենց տնային կահ-կարասիքը, պարտք են անում խանութպաններից, հացագործներից, վաշխառուներից: Չնայած այն բանին, վոր ճգնաժամի ժամանակ կապիտալիստական հասարակության սպառումը սաստիկ նեղանում է, այն այնուամենայնիվ ավելի բարձր է, քան ավելի ուժեղ աստիճանով կրճատված արտադրությունը: Դրա շնորհիվ մինչև ճգնաժամը կուտակված և ճգնաժամը վրա հասնելուց հետո յեղած առաջին շրջանի պաշարները գանգաղորեն են ներծծվում (рассасываются):

Գների անկումը կանգ է առնում: Սնանկությունները դադարում են: Վրա յե հասնում «հանգստի վիճակը անցկացրած ճգնաժամից հետո»: Ճգնաժամը փոխարինվում է դեպրեսսիայով:

Մարքսը ցիկլի ահա հենց այս փաղն է, վոր ընդունում է իբրև յելակետ կապիտալիստական վերարտադրության ցիկլային ընթացքն անալիզի յենթարկելիս:

Արդյոք ի՞նչ շարժիչ ուժ է, վորը տանում է դեպրեսսիայից դեպի աշխուժացում ու վերելք:

Այդ շարժիչ ուժը կապիտալի կուտակումն է հանդիսանում:

Առանձին կապիտալիստները, վոր չգիտեն կապիտալիզմի ներքին օրենքները և սոսկ մակերեսորեն են դիտում «շուկան», նկատում են, վոր իրենք ավելի շատ ապրանքներ կարող կլինեին վաճառահանել, յեթե հնարավորություն ունենային այդ ապրանքներն ավելի եժան վաճառելու: Ուստի և՝ շատ կապիտալիստներ առաջներում փողային ձևով կուտակված կապիտալը, վորն աղատված է շնորհիվ ճգնաժամի ժամանակ ապրանքաշրջանառության նեղացման, սկսում են վերածել արտադրողական կապիտալի: Սկսվում է հիմնական կապիտալի նորոգումը և ընդլայնումը—կառուցվում են նոր ձեռնարկություններ, մաշված մեքենաները փոխարինվում են նորերով, ավելի կատարելագործվածներով: Հիմնական կապիտալի նորոգումը և ընդլայնումը, արտադրողական կապիտալի կուտակումը—ահա շարժիչ այն ուժը, վոր առաջացնում է աշխուժացում ու վերելք: Այս մոմենտից է հենց, վոր սկսվում է կապիտալի իսկական մեծացումը, վորովհետև քանի դեռ կուտակված կապիտալը գոյություն ունի միայն փողի ձևով, արտադրության տեսակետից նա հանդիսանում է միայն պոտենցիալ կապիտալ: Յեվ միայն նրանից հետո, յերբ այդ փողերը ներդրվում են վորպես հաստատուն և ամենից առաջ վորպես հիմնական կապիտալ, նրանք կարող են գործել վորպես արտադրողական կապիտալ, վորպես հավելյալ արժեքի յուրացման միջոց:

Արտադրության մեջ ներդրումների աճմամբ և հիմնա-



կան կապիտալի մասսայական նորոգմամբ ընդլայնվում է I ստորաբաժանման ապրանքների շուկան: Կապիտալիստները մեկը մյուսից գնում են արտադրության միջոցներ: Լենինն այսպես է ասում այդ մասին.

«Արտադրության (և, հետևաբար, նաև ներքին շուկայի) զարգացումը առավելապես ի հաշիվ արտադրության միջոցների պարադոքսալ է թվում և իրենից ներկայացնում է, անկասկած, հակասություն: Սա իսկական «արտադրություն է արտադրության համար»—արտադրության ընդլայնումն է՝ առանց սպառման համապատասխան ընդլայնման: Բայց այս հակասությունը վոչ թե դոկտրինային է, այլ իրական կյանքինը: Սա հենց մի այնպիսի հակասություն է, վորը համապատասխանում է կապիտալիզմի բուն իսկ բնությանը և հասարակական տնտեսության այդ սիստեմի մյուս հակասություններին»[1]:

Կուտակումը, արտադրության ընդլայնումն ի հաշիվ արտադրության միջոցների վոչ միայն նշանակում է գնողունակության ընդլայնում, այլև իրև նրա հետևանք հասարակության սպառողունակության վորոշ ժամանակավոր ընդլայնում: I ստորաբաժանման արտադրության մեծացմամբ մեծանում է զբաղված բանվորների թիվը, մեծանում է այդ ստորաբաժանման փոփոխական կապիտալը. պրոլետարիատի սպառողունակությունն աճում է: Զբաղված բանվորների թվի մեծացմամբ աճում է—շահագործման տվյալ նորմայի անփոփոխության պայմաններում—հավելյալ արժեքի գումարը, և, հետևաբար, նաև I ստորաբաժանման կապիտալիստների սպառողական պահանջարկը: Սրա հետևանքն է հանդիսանում վաճառահանության մեծացումը և արտադրության աճումը II ստորաբաժանման մեջ, II ստորաբաժանման փոփոխական կապիտալի և հավելյալ արժեքի մեծացումը և, հետևաբար, նաև այս ստորաբաժանման բանվորների ու կապիտալիստների սպառման մեծացումը: Միևնույն այդ ժամանակ II ստորաբաժանումը ու-

1 Լենին, Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում, Ցերկեր (ռուսերեն), հ. III, եջ 31, 3-րդ հրատ.:

ժեղացրած տեմպերով նորոգում է իր հիմնական կապիտալը, պատվերներ է տալիս I ստորաբաժանմանը, վորի շնորհիվ արտադրությունը դարձյալ բարձրանում է: Աշխուժացումը աճում է և վերածվում ծաղկման: Կապիտալիստները չեն հասկանում, թե ինչու այս ամենը պետք է վերջանա ճգնաժամով...

Սակայն, կուտակումը—դա հակասական պրոցես է: Քանի դեռ այդ պրոցեսը շարունակվում է, նա առաջացնում է գնողունակության ընդլայնում, և այս ընդլայնման շրջանակներում նաև մեծանում է կապիտալիստական հասարակության սպառողունակությունը: Բայց կուտակումը միաժամանակ սրում է, վերջին հաշվով, արտադրության անսահման աճման տենդենցի և կապիտալիստական հասարակության սահմանափակ սպառողունակության միջև եղած հակասությունը, վորքան վոր նա (այսինքն՝ կուտակումը) անխուսափելիորեն շարունակում է հարաբերականորեն նվազեցնել կապիտալիստական հասարակության սպառողականությունը: Դա բղխում է կուտակման եությունից: Կուտակումը նշանակում է կապիտալի որգանական կազմի բարձրացում, աշխատանքի արտադրողականության բարձրացում մեծ քանակությամբ մեքենաների և, ընդամին, ավելի կատարելագործված մեքենաների կիրառման միջոցով, v-ի նվազումը c-ի հարաբերությամբ, շահույթի նորման իջնելու տենդենցը, հասարակության սպառողունակության նվազում՝ կապիտալիստական հասարակության—հենց ռեալ կուտակման հետևանքով—արագորեն աճող արտադրական ունակության հարաբերությամբ:

Այսպիսով, կուտակումը ստեղծում է յերկու հակասական պրոցեսներ. մի կողմից՝ հասարակության գնողունակության ընդլայնում և, վորպես այդ գնողունակության մի մաս, սպառողունակության ընդլայնում՝ նրա բացարձակ չափերով. մյուս կողմից՝ այդ կուտակումը ստեղծում է հասարակության սպառողականության հարաբերական նվազում այդ հասարակության արտադրական ունակության վերաբերմամբ:

Այսպիսով, կուտակումը նշանակում է, ինչպես Մարքսն



է արտահայտվում, մշտական հարաբերական գերարտադրություն:

«Հողագործության մեջ (ինչպես և արտադրության մյուս բոլոր ճյուղերում, վորոնք վարվում են կապիտալիստորեն) շարունակ առկա յե այն հարաբերական գերարտադրությունը, վորն ինքնընտրության նույնական է կուտակման հետ»[1]:

Կամ մի այլ տեղում.

«Կուտակման ամբողջ պրոցեսը հանգում է սմենից առաջ արտադրության ընդլայնմանը, վորը... կազմում է այն յերևույթների իմանենտ հիմունքը, վորոնք յերևան են գալիս ճգնաժամերում»[2]:

Ահա կուտակման այս սպառողունակությունը հարաբերականորեն նվազեցնող ֆունկցիան Մարքսին հիմք է տալիս նույնացնելու կուտակումը «հարաբերական գերարտադրության» հետ:

Կամ, ավելի պարզ ասած. քանի ռեալ կուտակման պրոցեսն ընթանում է ամբողջ թափով, քանի նոր ֆաբրիկաներ, գործարաններ, հրահալոցներ (դոմենյան վառարաններ), յերկաթուղիներ են կառուցվում, քանի հին մեքենաները փոխարինվում են նորերով, մինչև այդ ժամանակ շարունակվում է նաև ծաղկումը: Հենց վոր այս պրոցեսը մոտենում է վորոշ ավարտման, հենց վոր նոր արտադրական ապարատի նշանակելի մասը արդեն պատրաստված է, I ստորաբաժանման ապրանքների (չինանյութեր, մեքենաներ և այլն) պահանջարկը իսկույն ևեթ պակասում է, իսկ սրա հետևանքն է լինում նաև սպառման միջոցների պահանջարկի նվազումը, վորովհետև I ստորաբաժանման բանվորների մի մասը գործազուրկ է դառնում: Միևնույն այդ ժամանակ ապրանքների առաջարկը մեծանում է, վորովհետև նոր և վերասարքավորված հին գործարաններն ու ֆաբրիկաները սկսում են շուկա նետել ապ-

1 Մարքս, Կապիտալ, հ. III, եջ 593, Համկ(բ)կ կկ կուսհրատ, 1936 թ.: Ընդգծումը մերն է:—Ցե. Վ.:

2 Մարքս, Հավելյալ արժեքի թեորիաները, հ. II, մ. 2, եջ 173—174, Համկ(բ)կ կկ կուսհրատ, 1936 թ.:

բանքներ։ Գերարտադրություն արդեն գոյություն ունի, բայց ճգնաժամը բացահայտ ձևով դեռևս վրա չի հասնում, վորովհետև կապիտալիստները, վոր յերբեք չեն հավատում ծաղկման ֆազի վերջանալուն, շարունակում են լրացնել իրենց ապրանքային պաշարները։ Սակայն, արտադրությունը ավելի ու ավելի յե գերազանցում սպառումից, մինչև վոր, վերջապես, ճգնաժամը բացահայտորեն պայթում է։

Այսպիսին է, հարկավ, չափազանց պարզեցրած շարադրանքով, այն մեխանիզմը, վորը մի կողմից, արդեն է լինում ճգնաժամի մշտական, անվերջ շարունակվելուն, իսկ, մյուս կողմից, ծաղկման ամեն մի ֆազը արագորեն հասցնում է իր վախճանին և վոչնչացնում է նրան նոր ճգնաժամով։

## ԻՆՉՈՒ՞ ՃԳՆԱԺԱՄԵՐՆ ԱՎԵԼԻ ՈՒ ԱՎԵԼԻ ՍՈՒՐ, ԽՈՐԸ ՅԵՎ ՅԵՐԿԱՐԱՏԵՎ ԵՆ ԴԱՌՆՈՒՄ

Յերբ մենք ուսումնասիրում ենք վերջին հարյուր տարվա ճգնաժամերը, ապա մեկեն աչքի յե ընկնում, վոր նրանք ավելի ու ավելի սուր, ավելի խորը և ավելի յերկարատև են դառնում։ Վորպեսզի այս բանը հասկանանք, մենք հրաժարվելու յենք՝ մեր կողմից—բացառապես կապիտալիզմի ներքին օրենքները ավելի հեշտությամբ յուրացնելու նպատակներով թույլ տրված այն յենթադրությունից, վոր իբր թե գոյություն ունի մաքուր կապիտալիզմ։ Յերբեք չի յեղել մի հասարակություն, վորը բաղկացած լիներ միայն կապիտալիստներից ու բանվորներից։ Փաստորեն՝ «անկախ» արտադրողները—գյուղացիներն ու արհեստավորները—դեռևս մինչև այժմ էլ կազմում են յերկրագնդի բնակչության մեծամասնությունը։ Այս հանգամանքը պայմաններ է ստեղծել կապիտալիստական շուկայի ընդլայնման համար,—մի ընդլայնում, վորն առաջանում է գյուղացիական՝ կապիտալիստական հասարակակարգի տարրերի վերածվելու ատիճանական պրոցեսով (չերտավորման պրոցեսը)։ Այս պրոցեսը Լենինը համարում է կապիտալիստական շուկայի զարգացման հիմունքը ընդհանրապես։

«Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում» իր աշխատության մեջ Լենինը գրում է.

«Ներքին շուկայի ստեղծման (այսինքն՝ ապրանքային արտադրության և կապիտալիզմի զարգացման) հիմնական պրոցեսը աշխատանքի հասարակական բաժանումն է։ Այդ այն է, վոր հողագործությունից մեկը մյուսի հետևից անջատվում են հումքի մշակման տարբեր տեսակները (և այդ մշակման վերաբերյալ տարբեր ոպերացիաները), և կազմվում են արդյունաբերության ինքնուրույն ճյուղեր, վորոնք փոխանակում են իրենց պրոդուկտները (այժմ արդեն ապրանքները) հողագործության պրոդուկտներով։ Հողագործությունը այս կերպ ինքն էլ դառնում է արդյունաբերություն (այսինքն՝ ապրանքների արտադրություն), և նրանում էլ տեղի յե ունենում մասնագիտացման նույն պրոցեսը»[1]։

Ապրանքային արտադրության աճման հետ միասին կատարվում է գյուղացիության շերտավորում, քայքայում. մի կողմից՝ գյուղական բուրժուազիայի և, մյուս կողմից՝ գյուղատնտեսական պրոլետարիատի յերևան գալը։ Սրա շնորհիվ կապիտալիստական շուկան ընդլայնվում է՝ շնորհիվ գյուղացիության լայն շերտերի աղքատացմանը։

«Հետևաբար, գյուղացիության վերածումը գյուղական պրոլետարիատի՝ գլխավորապես սպառման առարկաների շուկա յե ստեղծում, իսկ նրա վերածումը գյուղական բուրժուազիայի՝ գլխավորապես արտադրության միջոցների շուկա յե ստեղծում։ Այլ կերպ ասած՝ «գյուղացիության» ստորին խմբերում մենք գիտում ենք բանվորական ուժի վերածումը ապրանքի, վերին խմբերում՝ արտադրության միջոցների վերածումը կապիտալի»[2]։

Գյուղացիության «ապագյուղացիացման» («раскрестья-

1 Լենին, Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում, Յերկեր, առաջ. հ. III, էջ 40, 3-րդ հրատ.։

2 Նույն տեղում, էջ 120։

нивание») այս պրոցեսը, ինչպես արտահայտվում է Լենինը, ստեղծում է, յեթե նրան նայենք «մաքուր» կապիտալիզմի տեսակետից, վաճառահանության կապիտալիստական շուկայի հավելադիր ընդլայնում: (Հենց այսպիսի ազդեցություն է գործում նաև արհեստավորական աշխատանքի արդյունքների արտամղումը ֆաբրիկային արդյունաբերության ավելի եժան ապրանքների կողմից):

Գյուղացիության՝ կապիտալիստական հասարակության տարրի վերածվելու այս պրոցեսը, անկասկած, կարևորագույն դեր է խաղացել վաճառահանության պրոբլեմի մեղմացման (և սրանով էլ ճգնաժամերի մեղմացման) գործում, կապիտալիզմի զարգացման առաջիկա ստադիաներում: Գաղութների նվաճումն ու շահագործումը ստանդարտ նույնպիսի պրոցես են նշանակել: Համեմատական նույնպիսի փաստ է հանդիսացել յերկաթուղիների ցանցի զարգացումը կապիտալիստական յերկրներում:

Յերկաթուղիների կառուցումը նշանակում է վաճառահանության շուկայի ընդլայնում I ստորաբաժանման (արտադրության միջոցների արտադրություն) ապրանքների համար: Բայց յերկաթուղիները I ստորաբաժանման մյուս ապրանքներից նրանով են տարբերվում, որ նրանք միայն նախանշանակվում են ապրանքների փոխադրման, և ոչ թե նրանց արտադրման համար: Այդ նշանակում է, որ նրանք չեն մեծացնում արտադրվող ապրանքների քանակը, ինչպես այդ քանակը ավելացնում են արտադրության նոր միջոցները՝ վերցրած բառիս նեղ իմաստով: Ուստի և՝ նրանք գերարտադրության աղբյուր չեն հանդիսանում:

Կապիտալիստական շուկայի ընդլայնման պրոցեսում նշանակելի դեր է խաղացել XIX դարի յերկրորդ կիսում և մանավանդ իմպերիալիզմի եպոխայում (մինչև 1913 թ.) կապիտալի եքսպորտը: Կապիտալի եքսպորտը նշանակում է ապրանքների հավելադիր արտահանում կապիտալիստական զարգացած յերկրներից—մի արտահանում, որ առանց կապիտալի արտահանման անհնարին կլիներ: Ուրիշ խոսքերով՝ վաճառահանելով իր ապրանքները, և առաջին հերթին՝ I ստորաբաժանման ապրանքները՝ եքսպորտյոր յերկիրը ինքը չի ներմուծում համապատասխան քանակությամբ ապրանքներ: Այս նշանակում է, որ կապիտալիստական շուկայի տարողությունը վորոշ ժամանակով «արհեստականորեն» ընդլայնվում է:

Իմպերիալիզմի—մոնոպոլիստական կապիտալիզմի—ժամանակաշրջանում ճգնաժամերը դառնում են արդեն ավելի սուր ու յերկարատև: Վճռական կապիտալիստական յերկրներում—Անգլիայում, ԱՄՆ-ում—գյուղացիության վերածումը կապիտալիստական հասարակության ելեմենտների արդեն ավարտված է: Ամերիկյան ֆերմերը՝ դա փոքր կապիտալիստական ապրանքային արտադրող է. նա արտադրում է ապրանքի մեկ-յերկու տեսակ շուկայի համար. նրա սեփական տնտեսության մեջ նրա կողմից շուկայի համար արտադրվող ապրանքների սպառումը չնչին դեր է խաղում: Այսպիսով, հիշյալ յերկրներում վերանում է կապիտալիստական շուկայի ընդլայնման կարևորագույն գործոնը:

Ի՞նչ ազդեցություն են գործում մոնոպոլիաները ճգնաժամերի վրա: Նրանք յերկարացնում են ճգնաժամերը և խորացնում են նրանց: Մոնոպոլիաները կապիտալին հնարավորություն են տալիս ճնշել աշխատավարձի վրա և այն իջեցնել բանվորական ուժի արժեքից ավելի ցածր, վորի շնորհիվ հասարակության սպառողունակությունը առավել ևս կրճատվում է: Մոնոպոլիաները արհեստականորեն պահպանում են ապրանքների բարձր գները, և դա դժվարացնում է ավելորդ ապրանքային պաշարների ներծծումը ճգնաժամերի ժամանակ: Նրանք խոչընդոտ են հանդիսանում հիմնական կապիտալի նորոգմանը և ընդլայնմանը, դրանով իսկ նրանք դժվարացնում են անցումը դեպրեսիայից դեպի աշխուժացումը:

Վերջապես, կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի ժամանակաշրջանում շուկայի պրոբլեմը ավելի ևս անլուծելի յե դառնում կապիտալի համար: Հասարակության սպառողունակությունը դրեթե միշտ հետ է մնում առաջարկից: Ուստի և՝ բուրժուազիան այժմ իսկ արդեն ի վիճակի չէ

ոգտագործելու իր ստեղծած արտադրողական ուժերը: Արտադրական շենքերի և սարքավորման, այսինքն՝ հիմնական կապիտալի նշանակելի մասը շարունակ մնում է չոգտագործված նույնիսկ ծաղկման[1] ֆազում: Մյուս կողմից, բանվորների նշանակելի և ցիկլից ցիկլ արագորեն աճող մասը աշխատանք ստանալու հնարավորություն չունի[2]— գործազրկությունը խրոնիկական յերևույթ է դառնում:

Այդ նշանակում է, վոր արդեն յեղած չոգտագործված հիմնական կապիտալը արդելք է հանդիսանում հիմնական կապիտալի ընդլայնման համար: Այս հանգամանքը ավելի ու ավելի յե ձևափոխում (деформирует) ցիկլի ընթացքը կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի ժամանակաշրջանում. ճգնաժամի ու դեպրեսսիայի ֆազերը դառնում են յերկարատև և խորը, աշխուժացման և վերելքի ֆազերը կարճատև ու մակերեսային[3]: Վերջին ցիկլում (1929—1937 թ. թ.)

---

1 Ամերիկյան դիտանականների հաշիվներով՝ նախորդ ցիկլի (1925—1929 թ. թ.) ամենարարձր կոնյունկտուրայի հնգամյակում ամերիկյան արդյունաբերության արտադրական ապարատի ոգտագործումը կազմել է ընդամենը 80%, ընդսմին՝ «լրիվ» ոգտագործում և համարվում, յերբ ձեռնարկությունը շաբաթը 48 ժամ է աշխատում: Յեթե շարունակենք այս հաշիվը մինչև 1934 թ. և, այսպիսով, ընդգրկենք լրիվ ցիկլը, ապա կպարզվի, վոր արտադրական կարողության ոգտագործումը կազմել է ընդամենը 57%:

2 Վորպես լուսաբանում կարող է ծառայել գործազուրկների շարժումը Անգլիայում:

ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՆ ԱՆԳԼԻԱՅՈՒՄ

(տոկոսներով)

| Թվականները | Նախաճգնաժամային մինիմումը | Ճգնաժամային մինիմումը |
|---|---|---|
| 1890—1893 | 2,1 | 7,5 |
| 1899—1904 | 2,0 | 6,0 |
| 1906—1908 | 3,6 | 7,8 |
| 1919—1922 | 2,4 | 15,2 |
| 1929—1932 | 10,4 | 22,1 |

3 XIX դարում ճգնաժամի ու դեպրեսսիայի յերկարատևությունը հարաբերակցորեն մեծ չեր, ցիկլի նշանակելիորեն մեծ մասը զբաղ-



ռահասարակ չի յեղել համընդհանուր վերելքի իսկական ֆազը:

Հիմնական կապիտալի վերանորոգման և ընդլայնման դանդաղացած տեմպը[1] կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի եպոխայում պակասեցնում է աշխատանք ստանալու հնարավորությունները և ճգնաժամի ժամանակ փողոց չպրտված բանվորների նշանակելի մասը դարձնում է խրոնիկական գործազուրկներ:

---

վում էին աշխուժացման, վերելքի ու ծաղկման ֆազերը: Արտադրության անկումը սովորաբար մի քանի ամիս եր շարունակվում միայն, և մեկ-յերկու տարում նորից ստացվում եր արտադրության նախորդ, բարձրագույն մակարդակը: Լուսաբանման համար բերենք տվյալներ չուգունի արտադրության մասին և կառուցողական կապալների (подряды) մասին ԱՄՆ-ում:

Վորքան ժամանակումն է ստացվել բարձրագույն կետը

(ամիսներով)

| Նախորդող ճգնաժամի բարձրագույն կետը | Չուգունի արտադրանքը | Կառուցողական գործը |
|---|---|---|
| Թվականները | | |
| 1893 | 20 | — |
| 1903 | 19 | 24 |
| 1907 | 27 | 24 |

(«Համաշխարհային տնտեսական ճգնաժամերը» (ռուսերեն), հ. I, էջ 98):

Կապիտալիզմի վերելքի եպոխայում արտադրության մակարդակը յուրաքանչյուր ցիկլում շատ ավելի գերազանցում եր նախորդ ցիկլի բարձրագույն կետից: Ահա թե ինչ է գրել Մարքսը ցիկլերի բնույթի մասին Անգլիայում XIX դարում.

«Իրական, այսինքն՝ արտադրողական ու ապրանքային կապիտալի մասշտաբը տալիս է ներմուծման ու արտահանման վիճակագրությունը: Յեվ այստեղ միշտ յերևան է գալիս, վոր անգլիական արդյունաբերության համար զարգացման նրա տասնամյա ցիկլերով հանգերձ (1815—1870), ճգնաժամից առաջ յեղած ծաղկման վերջին ժամանակաշրջանի մաքսիմումը մինիմում է հանդիսանում ծաղկման մոտակա հաջորդ ժամանակաշրջանի համար, ապա բարձրանում է մինչև նոր ավելի բարձր մաքսիմումը» (Մարքս, Կապիտալ, հ. III, էջ 444, Համկ(բ)Կ ԿԿ Կուսհրատ, 1936 թ.):

1 Չի կարելի խոսել հիմնական կապիտալի ընդլայնման «կանդաս-

Խրոնիկական մասսայական գործազրկությունը և նրա հետ կապված՝ բանվոր դասակարգի արագացված աղքատացումը ավելի ևս նեղացնում են հասարակության սպառողունակությունը և արագացնում են ճգնաժամի ծագումը: Նույն ուղղությամբ է գործում նաև խրոնիկական ագրարային ճգնաժամը, վորը հանդիսանում է կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի բաղկացուցիչ մասը: Ագրարային ճգնաժամը սրում է կապիտալիզմի որով գյուղացիության՝ չդադարող դիֆերենցիացիան (շերտավորումը)՝ ուժեղացնելով այդ դիֆերենցիացիան մինչև աշխատավոր գյուղացիներին մասսայական քայքայման աստիճանը հասցնելը, և սաստիկ կրճատում է գյուղացիության սպառողունակությունը:

Կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի այս կարևորագույն գործոնները հանգեցրին ցիկլերի ուժգին ձևափոխության՝ մանավանդ վերջին ցիկլի, վորը ավարտվեց ԱՄՆ-ում ճգնաժամը վրա հասնելով:

## 1937 Թ. ՃԳՆԱԺԱՄԸ ԱՄՆ-ՈՒՄ

Տնտեսական ճգնաժամի ծագումը ԱՄՆ-ում 1937 թ. աշնանը՝ նշանակում է ցիկլի վերջ,—մի ցիկլի, վորին սկիզբ եր դրել 1929 թ. ճգնաժամը:

Թեև տնտեսական նոր ճգնաժամը նույնպես դերարտադրության ցիկլային ճգնաժամ է, բայց նա եյապես տարբերվում է 1929 թ. ճգնաժամից: Այն ճգնաժամը սկսվեց տակավին կապիտալիզմի հարաբերական, թեկուզ և սաստիկ խախտված ստաբիլիզացիայի ժամանակաշրջանում: Բուրժուական աշխարհն այն պահին դեռևս չեր ընդունում

ման մասին, լճացման մասին արտադրողական ուժերի զարգացման մեջ, ինչպես այդ արել են և անում են տրոցկիստները: Դա՝ հակահեղափոխական թեորիա յե: Ռազմական տեխնիկայի հսկայական զարգացումը բացարձակապես անհնար կլիներ առանց տեխնիկայի և ընդհանրապես առանց արտադրողական ուժերի զարգացման: Ընդհանուր ճգնաժամի ժամանակաշրջանը բնութագրողը վոչ թե «լճացումն» է, այլ անընդունակությունը՝ օգտագործելու, թեկուզ դանդաղացած տեմպով, զարգացող արտադրողական ուժերը:



ստաբիլիզացիայի ժամանակավոր բնույթը: Նա մեծ լավատեսությամբ դիտում եր կապիտալիզմի հետագա զարգացումը: Առանձնապես ԱՄՆ-ում լայնորեն տարածված եր այն կարծիքը, թե սպասվում է մշտական ծաղկման («պրոսպերիտի») երա: Տասնամյակում (1920—1929 թ. թ.) արդյունաբերական արտադրանքը ԱՄՆ-ում ուժգնորեն աճեց: Արդյունաբերական արտադրանքի ինդեքսը (1923—1925 թ. թ.=100) բարձրացավ 87-ից մինչև 119[1]: Միջանկյալ ճգնաժամերը 1924 և 1927 թ. թ. չեյին փոխում վերելքի ընդհանուր դիծը: Տեղի յեր ունենում հիմնական կապիտալի չափազանց ինտենսիվ ընդլայնում, կառուցողական գործի արագ աշխուժացում[2]: Ուժգնորեն մեծացավ ամերիկյան ապրանքների եքսպորտի ծավալը՝ մասամբ կապիտալների նշանակելի եքսպորտի հետևանքով այլ յերկրները, առանձնապես Գերմանիա: Ընդսմին՝ աշխարհի նոր վերաբաժանումը, վոր իրագործվեց համաշխարհային պատերազմի հետևանքով, այն ժամանակ դեռևս թվում եր բավականին հաստատուն, չնայած վոր իմպերիալիստական հակասությունները սրման տեղեկեց եյին դրսևորում, բայց նրանք չեյին տանում դեպի ռազմական գործողությունները:

Այս ամենով է պայմանավորված յեղել այն մեծ լավատեսությունը, վոր 1928—1929 թ. թ. իշխում եր ԱՄՆ-ում: Ամերիկյան տնտեսության ղեկավարները կրկնում եյին հետագա տնտեսական ծաղկման մասին և հավատացնում եյին, թե ճգնաժամն անհնարին է: Իսկ ճգնաժամը փաստորեն սկսվեց:

Հարաբերական կայունացումը գովերգում ու գերագնահատում եյին թե բուրժուազիան և թե սոցիալ-դեմոկրատական լիդերները, այլև հակահեղափոխականներ, կապիտալիզմի ռեստավրատորներ դարձած Բուխարինն ու Տրոցկին:

1 «Ֆեդերալ ռեզերվ բուլլետին» («Ֆեդերալ ռեզերվային բյուլլետեն»), 1937 թ. հունվար, էջ 1148:

2 Կառուցողական գործունեության ինդեքսը (1923—1925 թվականներին=100) բարձրացավ 1921 թ. 56-ից մինչև 135-ը 1928 թվականին: Տե՛ս նույն տեղում, էջ 1148:

Ի հակակշիռ սրան ընկեր Ստալինը կուսակցության XV համագումարում արած իր զեկուցման մեջ, տասը տարի առաջ, ասում էր.

«Նշանակո՞ւմ է արդյոք այս ամենը, վոր դրանով իսկ կապիտալիզմի ստաբիլիզացիան հաստատուն, կայուն է դարձել: Իհարկե, վոչ։։ Ընդհակառակը, կայունացումից իսկ, այն բանից, վոր արտադրությունը աճում է, այն բանից, վոր տեխնիկական պրոցեսը և արտադրական հնարավորությունները աճում են, մինչդեռ համաշխարհային շուկան, այդ շուկայի սահմանները և առանձին իմպերիալիստական խմբերի ազդեցության վոլորտը ավելի կամ պակաս չափով կայուն են մնում,—հենց սրանից է, վոր աճում-զարգանում է համաշխարհային կապիտալիզմի ամենախորը և ամենասուր ճգնաժամը, վորը հղի է նոր պատերազմներով և վորը սպառնում է ինչևէ կայունացման գոյությանը:

Մասնակի կայունացումից աճում-զարգանում է կապիտալիզմի ճգնաժամի սաստկացում, հասունացող ճգնաժամը փլցնում է կայունացումը—այսպիսին է կապիտալիզմի զարգացման դիալեկտիկան պատմական տվյալ մոմենտում»[1]:

Այդ իսկ մոմենտները, վորոնք հանդեցրին հիմնական կապիտալի ուժեղ ընդլայնմանը, կառուցողական կոնյունկտուրայի անսովոր վերելքին, չլսված սպեկուլացիայի ԱՄՆ-ի շուկաներում, պայմանավորեցին նաև 1929 թ. ճգնաժամի չափազանց սուր, խորը և յերկարատև բնույթը:

Այստեղ մենք մոտենում ենք այն ցիկլի բնութագրին, վորը սկսվեց 1929 թ. և այժմ ավարտվում է: Այս ցիկլը չափազանց ձևափոխված է կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի ներգործությամբ: Վորոշ ազատություն (ВОЛЬНОСТЬ) թույլ տալով՝ մենք այդ ութ տարին կարող ենք բաժանել հետևյալ կերպով.

ճգնաժամային չորս տարիներ—1929 թ. աշնանից մինչև 1933 թ. միջինքը.

1 Համկ(բ)Կ XV համագումարի զեկուցումը, էջ 38—39, Համկ(բ)Կ ԿԿ կուսհրատ, 1935 թ.:



դեպրեսիայի յերկու տարի—1933 թ. միջինքից մինչև 1935 թ. միջինքը.

աշխուժացման (իսկ մի քանի յերկրներում և վերելքի) յերկու տարի—մինչև 1937 թ. աշունը:

Ցիկլի առանձին փազերի այսպիսի սահմանազծումը, հարկավ, վորոշ աստիճանի կամայական է, վորովհետև ցիկլի զարգացումը առանձին յերկրներում տեղի յեր ունենում չափազանց անհավասարաչափ (այս մասին մենք խոսելու յենք ստորև), թեպետև՝ ընդհանրապես ել,—բացառությամբ ճգնաժամի, վորն իրենից ներկայացնում է կապիտալիզմի բոլոր հակասությունների բռնի պայթյուն,—անցումը ցիկլի մի փազից մյուսը միշտ աստիճանաբար է կատարվում:

Այժմյան ցիկլում կապիտալիստական աշխարհի արդյունաբերական արտադրանքը մինչև տնտեսական նոր ճգնաժամը սկսվելը միայն վերջին տարումն է դերազանցել 1929 թ. միջին մակարդակին, բայց դեռ հասած չի յեղել նույն այդ տարվա բարձրագույն կետին:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԾԱՎԱԼԸ
(1929 թ. =100)

| Թվականները | Կապիտալիստական աշխարհը | ԱՄՆ-ը |
|---|---|---|
| 1929 | 100,0 | 100,0 |
| 1930 | 85,8 | 80,7 |
| 1931 | 74,3 | 68,1 |
| 1932 | 62,6 | 53,8 |
| 1933 | 71,1 | 63,9 |
| 1934 | 77,0 | 66,4 |
| 1935 | 85,9 | 75,6 |
| 1936 | 96,2 | 88,1 |
| Միջինը 1937 թ. առաջին 10 ամսում | 104,6 | 96,0 |

Ինչպես տեսնում ենք, համաշխարհային արդյունաբերական արտադրանքը մինչև նոր ճգնաժամի ծագումը միայն աննշան կերպով է դերազանցել 1929 թ. մակարդակին, իսկ ԱՄՆ-ում այդ մակարդակին առհասարակ հասած ել չի յեղել: Յեթե հաշվի առնենք, վոր կապիտալիստական աշ-

խարհի բնակչությունը 8 տարում նշանակելիորեն ավելացել է, վոր 1937 թ. արդյունաբերական արտադրանքի անչափորեն ավելի մեծ բաժինն է ծառայել սպառողինման նպատակներին, քան 1929 թ., ապա պարզ է, վոր միջին հաշվով բնակչության մի հոգուն կապիտալիստական աշխարհում 1937 թ. նշանակելիորեն ավելի քիչ ապրանքներ է ընկել, քան 1929 թվականին:

Այս ամենն ապացուցում է, վոր այս ցիկլը ավարտվել է առանց բովանդակ կապիտալիստական աշխարհն ընդգրկող վերելքի, այլևս չխոսելով ծաղկման մասին, վորի ժամանակ արդյունաբերական արտադրանքը պետք է, վոր նշանակելիորեն գերազանցեր նախորդ ցիկլի մաքսիմումը: Այս հաստատում է միջազգային կացության այն անալիզը, վոր տվել է ընկեր Ստալինը կուսակցության XVII համագումարում:

«Նշանակո՞ւմ է արդյոք այս, թե մենք գործ ունենք ճգնաժամից դեպի սովորական դեպրեսիա կատարվող անցման հետ,— դեպրեսիա, վորն իր հետևից բերում է արդյունաբերության նոր վերելք ու ծաղկում: Վո՛չ, չի՛ նշանակում: Համենայն դեպս՝ ներկայումս գոյություն չունեն այնպիսի տվյալներ, ուղղակի կամ անուղղակի տվյալներ, վորոնք խոսեին արդյունաբերության սկսվող վերելքի մասին՝ կապիտալիստական յերկրներում: Ավելին. դատելով ըստ ամենի՝ այդպիսի տվյալներ չեն ել կարող լինել, գոնե մերձավորագույն ժամանակում: Չեն կարող լինել, վորովհետև շարունակում են գործել բոլոր այն անբարենպաստ պայմանները, վորոնք չեն թողնում, վոր կապիտալիստական յերկրների արդյունաբերությունը փոքրիշատե լրջորեն վեր բարձրանա: Խոսքը վերաբերում է կապիտալիզմի շարունակվող ընդհանուր ճգնաժամին,—վորի պայմաններում է ընթանում տնտեսական ճգնաժամը,—ձեռնարկությունների խրոնիկական թերաբեռնվածությանը, խրոնիկական մասսայական գործազրկությանը, արդյունաբերական ճգնաժամի միահյուսվելուն գյուղատնտեսական ճգնաժամի հետ, հիմնական կապիտալի փոքրիշատե լուրջ նորոգման տենդենցի բացակայությանը,—նորոդում, վորը



սովորաբար նախահայտում է վերելքի սկսվելը և այլն և այլն:

Ակներև է, վոր մենք գործ ունենք անցման հետ—արդյունաբերության առավելագույն անկման կետից, արդյունաբերական ճգնաժամի առավելագույն խորության կետից դեպի դեպրեսիա, բայց վոչ դեպի սովորական դեպրեսիա, այլ դեպի առանձին տեսակի մի դեպրեսիա, վորը չի տանում դեպի արդյունաբերության նոր վերելք ու նոր ծաղկում, բայց և չի վերադարձնում արդյունաբերությունն առավելագույն անկման կետին»[1]:

Այս ցիկլում թեև չի յեղել ծաղկման ֆազա, բայց առանձին յերկրների արդյունաբերական արտադրանքը նշանակելիորեն գերազանցել է նախորդ ցիկլի բարձրագույն կետից: Սրա հետ մեկտեղ՝ նոր ճգնաժամը ծագելիս մի շարք յերկրներ մինչև այժմ չեն կարողացել հաղթահարել 1929 թ. ճգնաժամը: Սա կապիտալիստական տնտեսության զարգացման անհավասարաչափությամբ է պայմանավորված:

Իբրև համաշխարհային կապիտալիստական տնտեսության անհավասարաչափ զարգացման վառ պատկերավորում հանդիսանում են հետևյալ թվերը.

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԻՆԴԵՔՍԸ[2]

(1929 թ. = 100)

| Յերկրները | 1936 թ. | 1937 թ. | Միջինը մատնանշված ամիսներում |
|---|---|---|---|
| Ճապոնիա | 151,1 | 168,0 | 9 |
| Լատվիա | 143,1 | 153,3 | 10 |
| Հունաստան | 139,2 | 145,7 | 6 |
| Ֆինլանդիա | 133,3 | 146,8 | 9 |
| Ռումինիա | 130,0 | 125,5 | 6 |
| Դանիա | 130,0 | 134,0 | 11 |
| Շվեդիա | 129,0 | 148,8 | 11 |

1 Ստալին, Լենինիզմի հարցերը, եջ 684—685 ՀԿ(բ)Կ ԿԿ կուսհրատ, հրատ. 2-րդ, 1937 թ.: Թարգմանված ռուսերենի 10-րդ հրատարակությունից:

2 «Աղբերի Լիգայի ամսական վիճակագրական բյուլլետեն», 1938 թիվ, № 1:

| Երկրները | 1936 թ. | 1937 թ. | Միջինը մատնանշված ամիսներում |
|---|---|---|---|
| Հունգարիա | 128,5 | 138,1 | 9 |
| Չիլի | 127,7 | 130,0 | 10 |
| Եստոնիա | 120,0 | 131,0 | 11 |
| Անգլիա | 116,2 | 123,7 | 9 |
| Նորվեգիա | 115,2 | 128,0 | 11 |
| Բուլղարիա | 114,2 | 126,6 | 10 |
| Գերմանիա | 106,3 | 116,0 | 10 |
| Կանադա | 89,8 | 99,6 | 11 |
| ԱՄՆ | 88,1 | 85,1 | 11 |
| Իտալիա | 87,5 | 98,5 | 10 |
| Բելգիա | 87,1 | 87,8 | 11 |
| Ավստրիա | 81,0 | 104,3 | 10 |
| Չեխոսլովակիա | 80,2 | 96,6 | 10 |
| Լեհաստան | 72,2 | 85,0 | 11 |
| Հոլանդիա | 71,9 | 91,4 | 11 |
| Ֆրանսիա | 70,3 | 72,1 | 11 |

Այս աղյուսակը ցույց է տալիս հետևյալը.

1. Արդյունաբերական արտադրանքի նշանակելի աճում տեղի է ունենում միայն այն երկրներում, որոնք տակավին ներկայումս էլ ապրում են ինդուստրացման պրոցես: Բացի Ճապոնիայից՝ դրանք Սկանդինավյան թերակղզու, Բալկանների և Մերձբալթյան երկրների փոքր պետություններն են: Արդյունաբերական հին երկրներից միայն Անգլիայումն է արտադրանքի աճումը նշանակելիորեն գերազանցել 1929 թ. մակարդակին, բայց միայն այն բանի հետևանքով, որ Անգլիայում արտադրանքի բարձրացումը նախորդ ցիկլում շատ մեծ չի եղել: Հին արդյունաբերական երկրները—ԱՄՆ-ը, Գերմանիան, Ֆրանսիան, Իտալիան, Բելգիան, Հոլանդիան, Չեխոսլովակիան և այլն հազիվ են հասել 1929 թ. մակարդակին և կամ նույնիսկ հետ են մնացել այդ մակարդակից:

2. Մի շարք երկրներում 1929 թ. մակարդակին հասել են միայն 1937 թվականին՝ անմիջականորեն նոր ճգնաժամի սկսվելուց առաջ:

3. Վոչ միայն ԱՄՆ-ում, այլև մի շարք երկրներում արդյունաբերական արտադրանքի անկումը սկսվել և արդեն 1937 թվականին:

4. Կարելի է վորոշ կապ սահմանել սպառողինումների տեմպերի և արդյունաբերական արտադրանքի զարգացման ընթացքի միջև: Ճապոնիայի, Անգլիայի ու Գերմանիայի արդյունաբերական արտադրանքը, անկասկած, ավելի ցածր կլիներ, եթե չլիներ հսկայական արտադրությունը պատերազմի կարիքների համար:

* * *

1937 թ. ընթացքում նոր ճգնաժամի հասունացման սիմպտոմները արտահայտվեցին համաշխարհային մասշտաբով բորսայական ապրանքների գների ուժեղ անկմամբ և ակցիաների կուրսերի սաստիկ իջեցումով. այս մասին մենք դեռևս խոսելու ենք ստորև: Բայց ճգնաժամի ծագումը արտադրության վոլորտում կարելի է հավաստել առայժմ միայն ԱՄՆ-ում[1]:

Արդյունաբերական ակցիաների անկումը ԱՄՆ-ում նույնպես ավելի սաստիկ է եղել, քան յերբևիցե: Եթե 1929 թ. կուրսն ընդունենք վորպես 100, ապա 1937 թ. մարտ ամսին ամսական միջին կուրսը կազմում էր 80,3, իսկ նոյեմբերին նա ընկավ մինչև 50,7[2]:

Բերենք ամերիկյան միքանի հայտնի մոնոպոլիաների ակցիաների կուրսը, վորովհետև նրանց կուրսի շարժումը ավելի ցուցանշական է: Վերցնենք Ամերիկյան պողպատի տրեստը. 1937 թվականին ակցիայի ամենաբարձր կետը եղել է 126 դոլար, իսկ դեկտեմբերի 30-ին այդ ակցիան արժեր 54 դոլար, այսինքն կեսից պակաս: «Ջեներալ Մոտորս»,—ավտոմոբիլային ընկերություն,—ամենաբարձր կետը 1937 թվականին 70,5 դոլար ակցիային, դեկտեմբերի

1 Ընկ. Վարգան իր աշխատությունը գրել է 1938 թ. հունվարին, յերբ ճգնաժամը արտադրության վոլորտում ընդգրկել էր միայն ԱՄՆ: Այժմ ճգնաժամը ընդգրկել է նաև Անգլիայի արտադրության վոլորտը (տե՛ս հեղինակի հոդվածը այդ մասին, տպագրված «Правда»-յի № 163, 15 հունիսի, 1938 թ.): Ծանոթ. հայերեն խմբ.:

2 «Ազգերի Լիգայի ամսական վիճակագրական բյուլլետեն», 1937 թիվ, № 12:

30–ին 30 դոլլար: «Ջեներալ էլեկտրիկ,—համաշխարհային էլեկտրական ֆիրման,—ամենաբարձր կետը 65 դոլլար, դեկտեմբերի 30–ին 41 դոլլար: Վերջապես, պղնձի հանույթի և ձուլման ամենամեծ ձեռնարկությունը,—«Անակոնդա Կոպպեր», ամենաբարձր կետը 1937 թվականին 69 դոլլար, դեկտեմբերի 30–ին 29½ դոլլար: Հենց ամենահայտնի և ամենախոշոր ձեռնարկությունների ակցիաների կուրսերի այսպիսի հսկայական անկումը նույնպես ցույց է տալիս, որ կապիտալիստները զգում են, որ վերջին յերկու տարվա լավ ժամանակների վերջը գալիս է:

Խոշոր բուրժուազիայի փաստաբանները կուրսի այս ուժեղ անկումը ջանում են վերագրել վոչ թե արդյունաբերական ճգնաժամի ծագմանը, այլ Ռուզվելտի «կապիտալի համար թշնամական» միջոցառումներին: Այսպես, որինակ, Վ. Վ. Ոլդրիչը, Զեյդբանկի նախագահը, 1937 թ. հոկտեմբերի 14–ին հայտարարեց.

«Ակցիաների շուկայում յեղած կրախը—արդյոք նա նշանակելի հետևանքներ ունենալու յե, թե չի ունենալու գործարար կյանքի համար—չի առաջացել գործարար կոնյունկտուրայում յեղած փոփոխություններով: Թվական տվյալները ամբողջ ոդոստոսի գործերի ընթացքի մասին բացառապես բարենպաստ են յեղել, իսկ սեպտեմբերի վերաբերյալ թվերը միայն շատ չափավոր իջեցում են ցուցաբերում... Գործարար (деловой) աշխարհը ի տարբերություն բանկային աշխարհից—ակցիաների անկումը շուկայում՝ անհավանական եր համարում... Սաստիկ կոնտրաստ գոյություն ուներ, մի կողմից, այն հաշվետվությունների միջև, որ ներկայացնում եյին գործարար մարդիկ առհասարակ իրենց գործերի կացության մասին, և, մյուս կողմից՝ ակցիաների շուկայում տեղի ունեցած անցքերի ու բանկային գործիչների տրամադրությունների միջև»:

Ոլդրիչը հավատացնում եր, որ ակցիաների կուրսի անկման պատճառը յեղել են Ռուզվելտի կառավարության կողմից ձեռք առնված միջոցները, այն է՝ բորսային գործարքներից ստացվող շահույթների վրա, այլև մնացորդների, այսինքն՝ ակցիոներական ընկերությունների դիվիդենդների բաշխման մեջ չմտնող շահույթների վրա նշանակված հարկը, բորսային գործառնությունների կարգավորումը և այլն:

Բոլոր «հեղինակությունները» միաբերան համաձայն են այն բանին, որ տնտեսական դրությունը ԱՄՆ–ում, չնայած ակցիաների կուրսերի, ապրանքային գների ստատիկ անկմանը (իսկ հոկտեմբեր—նոյեմբերին նաև արդյունաբերական արտադրանքի անկմանը) առողջ է և և որ բացակայում են «մեծ» ճգնաժամի այնպիսի նախադրյալները, որոնք կային 1929 թվականին: Ֆինանսական վերակառուցման Կորպորացիայի ղեկավար Ջ. Ջոնսը տակավին նոյեմբերի 3–ին ասում եր, թե «հորիզոնի վրա չկան ամպեր, որոնք լրջորեն սպառնային ամերիկյան միջին քաղաքացուն», և որ վերջին շաբաթները չափազանց շատ ուշադրություն եր նվիրվում ակցիաների շուկայում յեղած շրջապտույտին» (круговорот)[1] :

Մորգենտաուն, ԱՄՆ–ի ֆինանսների մինիստրը, վերջերս հայտարարեց, թե «պայմանները բարեհաջող են գործարար կոնյունկտուրայի հետագա բարձրացման համար»[2]:

Նույն բանն են պնդում բոլոր «եքսպերտներն» ել: Այսպես, ամերիկյան տնտեսական մինիստրության կից՝ Գյուղատնտեսական եկոնոմիկայի բյուրոն նոյեմբերի կեսերին հաղորդում եր.

«Բյուրոն գտնում է, որ ներկա կոնյունկտուրային պաուզայում խոսքը միայն ժամանակավոր արգելակման (заминка) մասին է տնտեսական վերելքի մեջ, բայց թուլացումը մյուս տարի այնքան կտիրանա, որ արդյունաբերական արտադրության ինդեքսը 1938 թվականում միջին հաշվով հետ կմնա ընթացիկ տարվա միջին մակարդակից:

Բյուրոյի կատարած հետազոտումները ցույց են տալիս, որ ներկայումս բացակայում է այն ուղեկցող յերևույթների մեծամասնությունը, որոնցով անցյալում բնորոշվում եր յերկարատև դեպրեսիայի սկիզբը: Պարտքային հանձնառությունները ցածր են, վարկը եժան է ու առատ,

1 «Եկոնոմիստ», 1937 թ. նոյեմբերի 27:
2 Նույն տեղում:

բանկային սիստեմի ռեզերվներում լարում չկա, կառուցողական տնտեսության մեջ դեռևս վոչ մի բում (արհեստական աշխուժացում) չի եղել, և առայժմ չեն հայտաբերված սպեկուլատիվ խոտորումները (перегибы), վորոնք սովորաբար նախորդում են կոնյունկտուրային վերելքի վերջանալուն»[1]:

Նույնանման կարծիք են արտահայտում մասնավոր եքսպերտ-տնտեսագետները: Առաջատար արդյունաբերական ձեռնարկությունների տասնամեակ տնտեսագետ-խորհրդատուներ պնդում էին, թե արդյունաբերական արտադրանքը մյուս տարի, հավանորեն, միայն աննշան չափով հետ կմնա, դուցե և բնավ էլ հետ չմնա ընթացիկ տարվա միջին մակարդակից[2]:

Ռուզվելտի նամակը կոնգրեսի նստաշրջանի բացման առթիվ նույնպես կազմված է լավատես տոնով: Այնտեղ ասված է մոտավորապես հետևյալը. թող, իբր թե, կոնգրեսը այժմյան ժամանակավոր արդելակը չհամեմատի 1929 թ. տնտեսական ճգնաժամի հետ, վորովհետև յեթե համապատասխան միջոցներ ձեռք առնվեն, ապա յերկարաձգվող անկման համար վոչ մի հիմք չի լինի: Ներկա տնտեսական դրությունը, բացի սակավաթիվ, միանգամայն ուղղելի բացառություններից, ընդհանրապես անբարենպաստ չե: Բանկերի վիճակը առողջ է, տոկոսային դրույքը ցածր է, կապիտալ ներդրումները սպառնալիքի տակ չեն գտնվում: Յեթե այս պայմաններում մասնավոր տնտեսությունը ձեռնամուխ չի լինի պայքարելու գործազրկության դեմ, ապա կառավարությունը հարկադրված կլինի միջամտել այս գործին:

ԱՄՆ-ի սահմաններից դուրս եվ դերակշռում են լավատես կարծիքները: Հիտլերյան կառավարության եքսպերտ Վագեմանը, կոնյունկտուրային հետազոտությունների ինստիտուտի նախագահը, նոյեմբերի 23-ին հայտարարել է.

«ԱՄՆ-ում կացությունն առանձնապես կրիտիկական է, և այնտեղ հարկ է լինում հաշվի նստել սաստիկ անկման հնարավորության հետ առնվազն մյուս տարվա սկզբներին, իսկ դուցե և ավելի յերկար: Սակայն, հաշիվ թե առայժմ հարկավոր լինի վախենալ ծանր ճգնաժամից. ամենից առաջ՝ կոնյունկտուրայի պայմանները ինչպես ԱՄՆ-ում, այնպես և մնացյալ աշխարհում նշանակելիորեն ավելի բարենպաստ են, քան 1929 թվականին»[1]:

«Անալիստ»-ում ամենից սիստեմատիկորեն են շարադրված արդումենտները հոդուտ ԱՄՆ-ի տնտեսական կացության այսպիսի լավատես դնահատման: Այդ փաստարկները հանդում են հետևյալին. ա) փողային շուկայում լարում չկա, տոկոսային դրույքը շատ ցածր է. բ) կապիտալների պակասություն չկա. գ) ապրանքային պաշարների մեջ մեծ ավելցուկ չկա. դ) արտադրությունը, հաշված բնակչության ամեն մի հոդուն, նշանակելիորեն ավելի ցածր է, քան 1929 թ. բարձրագույն կետի ժամանակ[2]:

Այս փաստարկներից վոչ մեկն էլ քննադատության չի դիմանում: Նրանց հիմնական արատը, վոր միանգամայն բնական է բուրժուական տեսակետի համար, կայանում է նրանում, վոր այստեղ բոլորովին նկատի չի առնված կապիտալիստական սիստեմի ընդհանուր ճգնաժամի իրադրությունը: Բոլոր տեսակների փոխատուական կապիտալի ավելցուկը միայն անդրադարձնում է այն փաստը, վոր գոյություն ունի հիմնական կապիտալի խրոնիկական ավելցուկ: Բուրժուազիան ի վիճակի չե փոքրիշատե լրիվ կերպով շղթադործելու առկա արտադրական ձեռնարկությունները: Անգամ ամենամեծ բարենպաստ կոնյունկտուրային մոմենտում ձեռնարկությունների արտադրական կարողությունը իր նշանակելի մասով՝ 15—20%-ով մնում է չշղթադործված: Ըստինքյան պարզ է, վոր այսպիսի պայմաններում ընդհանրապես բուրժուազիան և մասնավորապես խոշոր մոնոպոլիաները տատանումներով է միայն, վոր ձեռնամուխ են լինում արդյունաբերական ձեռնարկությունների ընդլայնմանը կամ նորոգմանը, հիմնական կապիտալի ընդլայնմանը:

Այս, հարկավ, չի նշանակում, թե տեխնիկական առաջադիմությունը վերջին ցիկլի ժամանակ վորևե դադարման

1 «Նոյե ցյուրիխեր ցայտունգ», 1937 թ. նոյեմբերի 11:
2 Նույն տեղում, 1937 թ. նոյեմբերի 8:



1 «Բեռլիներ բյորզենցայտունգ», 1937 թ. նոյեմբերի 24:
2 «Անալիստ», 1937 թ. հոկտեմբերի 23, էջ 658:

և յենթարկվել։ Պայքարը վաճառահանության համար, այլև ռազմական արդյունաբերության պահանջները չեն թույլ տալիս այդ։ Անկասկած է, որ վերջին ճգնաժամի ժամանակ տեղի յե ունեցել արտադրության միջոցների արդիականացում ինչպես ԱՄՆ-ում, նույնպես և կապիտալիստական մյուս բոլոր յերկրներում։

Բայց ըստ վիճակագրական տվյալների պարզ յերևում է, որ ԱՄՆ-ում այդ արդիականացումը առաջին հերթին իրագործվել է մեքենային սարքավորման նորոգումով արդեն գոյություն ունեցող գործարաններում, և վոչ թե նոր գործարանային շինարարությամբ։ Այս ցույց է տալիս նաև ԱՄՆ-ի արդյունաբերական շինարարության և մեքենաշինության զարգացման վերաբերյալ տվյալների զուգադրումը։

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍԸ [1]

| Թվականները | Արժեքը | Մակերեսը | Մեքենաշինությունը (պատվերները) |
|---|---|---|---|
| 1929 | 100,0 | 100,0 | 100,0 |
| 1930 | 59,2 | 54,2 | 45,5 |
| 1931 | 29,0 | 26,3 | 26,3 |
| 1932 | 11,3 | 12,3 | 12,6 |
| 1933 | 15,4 | 15,6 | 17,4 |
| 1934 | 18,1 | 17,2 | 29.7 |
| 1935 | 18,5 | 21,0 | 55,2 |
| 1936 | 30,3 | 36,5 | 87,7 |
| 1937 (առաջին 9 ամիսը) | 45,5 | 51,2 | 130,0 |

Այս թվերը ցույց են տալիս, որ ֆաբրիկա-գործարանային շինարարությունը 1937 թվին 1929 թ. համանման շինարարության կեսին էլ չի հասել, իսկ մեքենաների արտադրությունը 1937 թվին նշանակելիորեն անցել է 1929 թ. բարձրագույն կետից, այսինքն՝ հին ֆաբրիկաներում ու գործարաններում դրված են նոր մեքենաներ, պարզ է, հին սարքավորման փոխարեն։ Ի միջի այլոց՝ մեքենային սարքավորման պատվերներում բարձրագույն կետն արդեն ձեռք է բերված 1937 թ. ապրիլին՝ հասնելով մինչև 181,3 ինդեքսը, և այդ ժամանակից սկսած պատվերները արագորեն

[1] «Ազգերի Լիգայի ամսական վիճակագրական բյուլլետեն», 1937 թ. № 12։



ընկնում էին՝ իջնելով ոգոստոսին մինչև 115 ինդեքսը։

Ֆաբրիկա-գործարանային շինարարության և մեքենային սարքավորման պատվերների թվերը ամբողջ ցիկլի բարբերմամբ պարզ ցույց են տալիս, որ այդ ցիկլի ժամանակում հիմնական կապիտալի իսկական ընդլայնում ԱՄՆ-ում չի յեղել։ Տարիներ են յեղել, յերբ մեքենաների մաշվելը ակներևորեն ավելի բարձր է յեղել, քան նոր մեքենային սարքավորման հոսանքը։ Հիմնական կապիտալի —I ստորաբաժանման արտադրանքի ցիկլային աճման գլխավոր աղբյուրի ընդլայնման բացակայությունը, որը նշանակում է նաև II ստորաբաժանման ապրանքների վաճառահանության ընդլայնման բացակայություն—գլխավոր պատճառներից մեկն է այն բանի, որ ԱՄՆ-ում չի սկսվել ծաղկման փաղը, և նոր ճգնաժամը պայթեց ավելի առաջ, քան ձեռք բերվեց նախորդ ցիկլի բարձրագույն կետը։

ԱԿՑԻՈՆԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՊԻՏԱԼԻ ՆՈՐ ԵՄԻՍԻԱՆ [1]

| Թվականները | Ակցիաները և օբլիգացիաները միլիոն դոլար.) | Թվականները | Ակցիաները և օբլիգացիաները (միլիոն դոլար.) |
|---|---|---|---|
| 1928 | 5,346 | 1933 | 161 |
| 1929 | 8,002 | 1934 | 178 |
| 1930 | 4,483 | 1935 | 404 |
| 1931 | 1,551 | 1936 | 1,192 |
| 1932 | 325 | 1937 (10 ամիսը) | 1,097 |

Այս թվերը ցույց են տալիս, որ վերջին 7 տարում ընդհանուր առմամբ բաց է թողնված յեղել մոտավորապես հենց այնքան ակցիաներ ու օբլիգացիաներ, որքան 1930 թ., և միայն մի քիչ ավելի, քան 1929 թ. կիսում։ Հետևաբար, որքան վոր հիմնական կապիտալի նորոգում է կատարված յեղել՝ այդ նորոգումը կատարվել է ի հաշիվ մոնոպոլիաների շահույթների,—շահույթներ, որոնք վերջին

[1] «Ֆեդերալ ռեզերվ բյուլլետին», 1937 թ. դեկտեմբեր, էջ 1181։

տարիներս չատ բարձր են յեղել[1],—չշոշափելով կապիտալների շուկան:

Նոր կուտակված կապիտալը վորպես արտադրողական կապիտալ կիրառելու անհնարաւորությունը, հիմնական կապիտալի խրոնիկական ավելցուկը անդրադառնում են ԱՄՆ-ում յեղած ամբողջ ցիկլի համար բնորոշ՝ փոխատու կապիտալի ավելցուկով ինչպես փողի շուկայում, այնպես և կապիտալների շուկայում[2]: ԱՄՆ-ում կապիտալն ավելի կուտակվում եր փողային ձևով, քան հնարավոր եր դործադրել վորպես արտադրողական կապիտալ: Սրանով և բացատրվում ազատ փողային կապիտալների առկայությունը փողերի շուկայում և կապիտալների շուկայում,—մի բան, վորը, սակայն, վոչ մի կերպ չի կարող կանխել իսկական ճդնաժամի ծագումը: Միայն բուրժուական «տեսաբան»-տնտեսագետներն են, վորոնք շրջանառության վոլորտումն են տեսնում նախահիմունքը (первооснова) և վորոնք փորձում են կապիտալիստական վերարտադրության ցիկլային շարժումը հետևցնել կապիտալի շուկայում յեղած մակերեսային յերևույթներից, վորոնք կարող են դայթակղվել այն խելագար պատրանքով, թե իբր ազատ փողային կապիտալների առկա լինելը փողի շուկայում ու կապիտալների շուկայում կարող է արդելք հանդիսանալ ճդնաժամերի ծագմանը:

Ինչ վերաբերում է այն պնդմանը, թե իբր ապրանքային պաշարների գերարտադրության բացակայությունը փաստարկ է ընդդեմ ճդնաժամի ծագման, ապա մենք այս առթիվ կուզեինք ամենից առաջ նշել հետևյալը. դեռևս

1 40 առաջատար արդյունաբերական մոնոպոլ ձեռնարկությունների զուտ շահույթը կազմել է (միլիոն դոլլարներով).

| 1935 թ. | 1936 թ. | 1937 թ. (առաջին 9 ամիսը) |
|---|---|---|
| 324 | 506 | 400 |

(Նեյշենել սիթի բանկի ամսական բյուլլետենի 1937 թ. նոյեմբերի հաշվարկումներով):

2 Փողային շուկան բնորոշվում է կարճաժամկետ փողային գործառնություններով (փոխատվություններ և այլն), կապիտալների շուկան—յերկարաժամկետ գործառնություններով (օրլիգացիաների եմիսսիա և այլն):



Մարքսը համառորեն ընդդեմ եր, վոր այն փաստը, թե կապիտալիստական արտադրողների մոտ, արդյունաբերողների մոտ, վաճառահանությունը հարթ է դնում, և ապրանքները պակաս չեն մնում, վոչ մի կերպ չի կարող ապացույց հանդիսանալ՝ ապրանքները վերջնական հաշվով սպառողին փաստորեն վաճառահանելու մասին: Այդ ապրանքները կարող են կուտակվել շրջանառության վոլորտում, մեծածախ ու մանրածախ առևտրում: Մարքսը դրել է.

«Վերարտադրության պրոցեսը մինչև վորոշ սահման կարող է կատարվել առաջվա և կամ նույնիսկ ընդլայնված մասշտաբով, թեև նրանից նետված ապրանքները իրապես չեն անցել անձնական կամ արտադրողական սպառման վոլորտը: Ապրանքների սպառումը չի մտնում կապիտալի շրջաստուցի մեջ, վորից նրանք առաջացել են: Որինակ, յեթե մանվածքը վաճառված է՝ մանվածքի մեջ ներկայացված կապիտալային արժեքի շրջաստուցը նորից կարող է սկսվել՝ անկախ այն բանից, թե ինչ տեղի ունեցավ վաճառված մանվածքի հետ: Քանի վոր հաջողվում է վաճառել պրոդուկտը՝ ամեն ինչ նորմալ է ընթանում կապիտալիստական արտադրողի տեսակետից: Պրոդուկտով ներկայացված կապիտալային արժեքի շրջաստուցը չի խախտվում: Իսկ յեթե այդ պրոցեսն ընդլայնվում է,—վորը յենթադրում է արտադրության միջոցների արտադրողական սպառման ընդլայնում,—ապա կապիտալի այսպիսի վերարտադրությունը կարող է ուղեկցվել անձնական ընդլայնված սպառումով (և, հետևաբար, պահանջարկով) բանվորների կողմում, վորովհետև այդ պրոցեսի վերաբերմամբ իբրև նախապատրաստում և միջնորդող ողակ հանդիսանում է արտադրողական սպառումը: Այսպես կարող է աճել-մեծանալ հավելյալ արժեքի արտադրությունը, իսկ նրա հետ մեկտեղ և կապիտալիստի անձնական սպառումը, վերարտադրության ամբողջ պրոցեսը կարող է դտնվել ամենածաղկուն վիճակում—և, սակայն, ապրանքների մեծ մասը կարող է անցնել սպառման վոլորտը միայն առերևութորեն, իսկ իրոք այն մնում է վերագնողների (перекупщики) ձեռքում չվաճառ-

ված, հետևաբար, փաստորեն դեռևս չարունակում է մնալ շուկայում»[1]:

Վիճակագրական տվյալների սակավությունը թույլ չի տալիս դատել, թե այս պրոցեսը ինչ չափով է այժմ կատարվում ԱՄՆ-ում: Ապրանքային պաշարների վիճակագրությունն ընդգրկում է միայն փաստական պաշարների մի մասը, և ընդամենը թվերը միշտ մեծ ուշացումով են հրապարակվում: Վերջին հանրագումարային տվյալներ կան միայն սեպտեմբերի մասին: Նրանք ցույց են տալիս բարձրացուցիչ (повышательная) տենդենց վերջին ամիսներում, և ընդհանուր առմամբ նրանք ավելի բարձր են, քան մի տարի առաջ եր, թեև ավելի ցածր եր, քան 1929 թ. եր, ճգնաժամը ծագելուց առաջ:

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ԻՆԴԵՔՍԸ[2]

(1923—1925 թ. թ. = 100)

| | 1937 թ. (մայիս) | 1937 թ. (սեպտեմբեր) | 1936 թ. (սեպտեմբեր) |
|---|---|---|---|
| Ընդհանուր ինդեքսը | 99 | 130 | 122 |
| Արդյունաբերական ապրանքները | 107 | 108 | 103 |
| Հումքը | 93 | 145 | 136 |
| Մետաղները | 70 | 111 | 96 |
| Քիմիական պրոդուկտները | 144 | 144 | 125 |

Այսպիսով, ապրանքային պաշարները մայիսից մինչև սեպտեմբեր աճել ու հասել են նշանակելիորեն ավելի մեծ չափերի, քան մի տարի առաջ եր[3]: Այն հանգամանքը, որ պաշարների կուտակումը ճգնաժամը սկսվելուց առաջ դեռ չի հասել հարաբերաբար մեծ չափերի՝ բացատրվում է նրանով, որ 1929 թ. ճգնաժամի ծանր ցնցումների ժամանակից սկսած ամերիկյան բուրժուազիան ցուցաբերում է փոքր ինչ մեծ զգուշություն այս ուղղությամբ:

Այս կապակցությամբ պետք է ուշադրություն դարձնել դարձյալ մի հանգամանքի վրա: Ամերիկյան բուրժուազիան իր ապրանքների համար վաճառահանություն վորոնելիս արդեն 1936 թ. նշանակալից չափով ավելի, քան 1929 թվին, դիմում եր տարաժամկետ (ապրանքագինը մաս-մաս ստանալու) վաճառման մեթոդին:

Յեթե 1929 թ. ԱՄՆ-ում վաճառված եյին տարաժամկետ ձևով (չհաշված անշարժ գույքը) 5 միլիարդ դոլլարի ապրանքներ, իսկ 1932 թ. 2,5 միլիարդ դոլլարի, ապա 1936 թ. այդ գումարն աճեց մինչև 9 միլիարդ դոլլարի[1]:

Տնտեսապես ի՞նչ է նշանակում ապրանքների (կահկարասիք, խոհանոցի իրեր, ավտոմոբիլներ, հագուստեղեն և այլն) տարաժամկետ ձևով վաճառումը մի այնպիսի գումարով, ինչպես 9 միլիարդ դոլլարն է: Այդ նշանակում է, վոր այդ ապրանքների համար չի յեղել «վճարունակ պահանջարկ»: Ապրանքները վարկով սպառողներին վաճառահանելով՝ բուրժուազիան դրանով իսկ իր թաթն է դնում գնորդների ապագա յեկամտի վրա: Ապրանքները, ճիշտ վոր, վաճառված են, բայց նրանց արժեքը դեռ չի վճարված: Յեթե սպառողներին վարկ չտրվեր, այդ ապրանքները պահված կմնային պահեստներում: Ճգնաժամի նախադրյալների ստեղծման տեսակետից՝ տարաժամկետ ձևով վաճառված ապրանքները այնպիսի ազդեցություն են գործում, ինչպես և կուտակված պաշարները: Վարկավորումով առևտրականները գնորդին հարկադրում են ծախսել իր ապագա յեկամուտը վորոշ ապրանքներ գնելու համար: Բայց, ապրանք-

1 Մարքս, Կապիտալ, հ. II, եջ 64—65, Համկ(բ)Կ ԿԿ Կուսհրատ, 1936 թ.:

2 «Սորվեյ ոֆ կերրենտ բիզնես», 1937 թ. նոյեմբեր:

3 Դատելով ըստ լրագրական հաղորդումների՝ սեպտեմբերին ու հոկտեմբերին տեղի յե ունեցել ապրանքային պաշարների հետագա աբսոլյուտ կուտակում: Այսպես, օրինակ, պղնձի պաշարները սեպտեմբերից մինչև հոկտեմբեր աճել են 144 հազարից մինչև 182 հազ. տոննն, այն ժամանակ, յերբ պղնձի սպառումն ընկել է 66 հազարից մինչև 15 հազ. տոննն («Թայմս» 1937 թ. նոյեմբերի 16): Կապարի պաշարները հոկտեմբերին աճել են 5 հազ. տոննով, իսկ սպառումն ընկել է սեպտեմբերին 54 հազ. տոննից մինչև 39 հազ. տոնն հոկտեմբերին («Բեռլիներ Բյորզենցայտունգ» 1937 թ. նոյեմբերի 26):

Նույն բանը նկատվում է նաև ուրիշ շատ ճյուղերում:

1 «Նյու-Յորկ տրեստ կորպորեյշեն»-ի ամսական բյուլլետենի 1937 թվի ապրիլի հաշվարկումներով:

ները ստանալով տարաժամկետ ձևով (գինը մաս-մաս վճարելու պայմանով), սպառողը, հետագայում, մինչև վոր նա կծածկի վճարումները, իր ընթացիկ յեկամուտով հարկադրված է գնել համապատասխանորեն ավելի քիչ քանակություն ապրանքներ: Իսկ յեթե վարկով վաճառված սպառման միջոցները ավելացնենք ապրանքային պաշարներին, ապա բանից դուրս կգա, վոր վերջիններիս կուտակումն արդեն նշանակալիորեն աճել-մեծացել է ճգնաժամի սկզբին:

Միանգամայն անզոր է և այն փաստարկը, թե իբր ճգնաժամը չի կարող պայթել այն պատճառով, վոր ԱՄՆ-ում բնակչության մի հոգուն ընկնող արդյունաբերական արտադրանքը այժմ ավելի ցածր է, քան 1929 թվականին: Կապիտալիզմի ծաղկման եպոխայում վորոշ հիմքով դեռևս կարելի յեր բերել մի այսպիսի փաստարկ ըստ պատմական անալոգիայի: Բայց կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի ժամանակաշրջանում այդպիսի անալոգիաներն անզոր են:

Այս փաստարկի հետևում թաղնված է բոլորովին սխալ տեսական նախադրյալ—վորպես թե կապիտալիստական արտադրության նպատակը բնակչությանը սպառման միջոցներ ամենալավ ձևով մատակարարելն է, վորպես թե բնակչության բացարձակ պահանջմունքներն են, և վոչ թե կապիտալի ոգտագործման հնարավորությունը, վոր սահման են դնում կապիտալիստական արտադրության ընդլայնմանը:

Այս ցնդաբանությունը հերքված է դեռևս Մարքսի կողմից:

«Բանը նրանում չէ, վոր դոյության միջոցներ արտադրվում են չափազանց շատ՝ դոյություն ունեցող բնակչության համեմատությամբ: Ընդհակառակը: Այդ միջոցները արտադրվում են չափազանց քիչ նրա համար, վորպեսզի բնակչության բազմությունը կարողանար կարգին և մարդավարի ապրել...

Բայց պարբերաբար աշխատանքի միջոցներ և դոյության միջոցներ չափազանց շատ են արտադրվում նրա համար, վորպեսզի նրանք կարողանային դործել, իբրև բանվորներին շահագործելու միջոցներ, մի շահագործում,



վոր տալիս է շահույթի վորոշ նորմա: Ապրանքներ չափազանց շատ են արտադրվում նրա համար, վորպեսզի նրանց մեջ պարունակվող արժեքը և այդ արժեքի մեջ բովանդակվող հավելյալ արժեքը կարելի լիներ իրացնել և վերածել նոր կապիտալի՝ բաշխման նույն պայմաններում և սպառման հարաբերություններում, վորոնք վորոշվում են կապիտալիստական արտադրությամբ, այսինքն՝ վորպեսզի այդ պրոցեսը կարողանա կատարվել առանց շարունակ վերսկսվող պայթումների:

Բանը նրանում չէ, վոր չափազանց շատ հարստություն է արտադրվում:

Բայց պարբերաբար չափազանց շատ հարստություն է արտադրվում այդ հարստության կապիտալիստական, անտագոնիստական ձևերով»[1]:

Ամերիկյան վիճակագրության թվերը իրենց աղքատությամբ հանդերձ միանգամայն պարզությամբ վկայում են այն մասին, վոր ներկայումս մենք գործ ունենք դերարտադրության իսկական ճգնաժամի ծաղման հետ՝ այդ ճգնաժամի կլասիկ ձևով: Ճգնաժամը սկսվեց սպառման միջոցների արտադրության անկումից, վորը շարունակվեց միքանի ամիս և ապա նետվեց (перекинулся) արտադրության միջոցների արտադրման վրա, ընդհանրապես, ինչպես դա սովորաբար տեղի յե ունենում, շատ ավելի սրությամբ, քան II ստորաբաժանման մեջ:

Ադյունաբերական արտադրանքի ընթացքը ԱՄՆ-ում 1937 թ. տեսողության ընթացքում պատկերանում է հետևյալ ձևով[2]:

(1929 թ. = 100)

| | Մարտ | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր |
|---|---|---|---|---|---|---|---|
| Արտադրության միջոցներ | 93,8 | 92,6 | 100,6 | 104,1 | 94,4 | 83,5 | 62,4 |
| Սպառման միջոցներ | 102,6 | 98,7 | 92,9 | 94,7 | 91,6 | 86,0 | 82,8 |

1 Մարքս, Կապիտալ, հ. III, էջ 232—233, Համկ(բ)կ ԿԿ Կուսհրատ, 1936 թ.:

2 «Աղդերի լեդայի ամսական վիճակագրական բյուլլետեն», 1938 թ. № 1:

Սպառման միջոցների արտադրումը մարտին հասել է բարձրագույն կետին: Այնուհետև նա սկսեց իջնել աննշան տատանումներով և նոյեմբերին ընկավ 20%-ով: Արտադրության միջոցների արտադրումը կես տարվա ընթացքում տակավին շարունակում էր բարձրանալ և ոգոստոսին հասավ բարձրագույն կետին, իսկ ապա նոյեմբերին մեկեն գլորվեց ցած 38%-ով:

Հետևաբար, ամերիկյան հասարակության սպառողունակությունը հասել է իր սահմանակետին, վորն ավելի ցածր է 1929 թ. մաքսիմումից: Այստեղ արտահայտվում է կապիտալիզմի ընհանուր ճգնաժամի ազդեցությունը: Մենք, սակայն, ուզում ենք կոնկրետորեն վորոշել ԱՄՆ-ի բնակչության սպառողունակության հետագա հարաբերական կրճատման կարևորագույն պատճառները:

Վճռողական պատճառներից մեկն է հանդիսանում խրոնիկական մասսայական գործազրկությունը:

ԳՈՐԾԱԶՈՒՐԿՆԵՐԻ ԹԻՎԸ ԿԱԶՄՈՒՄ ԵՐ
(հազարներով)

| | 1929 թ. (սեպտեմբեր) | 1937 թ. (ոգոստոս) |
|---|---|---|
| Աշխատանքի Ամերիկյան ֆեդերացիայի հաշվարկումներով[1] | 614 | 8552 |
| | 1929 թ. (մարտ) | 1937 թ. (մարտ) |
| Կապիտալիստական «Ազգային արդյունաբերական խորհրդակցական բյուրոյի» հաշվարկումներով[2] | 1054 | 7529 |

Թեկուզ այս թվերը և վոչ բոլորովին ճիշտ են (ԱՄՆ-ում գործազրկության պաշտոնական վիճակագրություն չկա), բայց և այնպես նրանք ցույց են տալիս հսկայական տարբերություն 1929 և 1937 թ.թ. միջև: 1929 թ. ԱՄՆ-ի բանվոր դասակարգը մի այնպիսի աստիճանով էր զբաղված, վոր առհասարակ հնարավոր է կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի պայմաններում (կապիտալիզմի որով միշտ գոյություն ունի արդյունաբերական պահեստի բանակ, իսկ ընդհանուր ճգնաժամի պայմաններում նաև խրոնիկական գործազրկություն՝ ինչքան էլ վոր կապիտալիստները լաց լինեն բանվորական ձեռքերի պակասության առթիվ): 1937 թ. թեկուզ արտադրությունը մոտավորապես է հասել 1929 թ. մակարդակին, մինչև 10 միլիոնի չափ բանվորներ (տարբեր հաշվարկումներով) մնում էին գործազուրկ (նրանց մի մասը ներգրավվեց հասարակական աշխատանքների մեջ, վոր կազմակերպել են քաղաքային խշխանությունները ու կառավարությունը):

Տեխնիկական առաջադիմության և աշխատանքի ինտենսիֆիկացման հետևանքով 1937 թ. բանվորների ավելի պակաս թիվը, չնայած բանվորական ժամանակի կրճատմանը, արտադրեց հենց այնքան ապրանքներ, վորքան արտադրված էր 1929 թվականին: Ցեթե ընդունենք զբաղվածության՝ ֆեդերալ ռեզերվային բյուրոյի սահմանած ինդեքսը 1929 թ. համար 100, ապա 1937 թ. առաջին 8 ամսում այդ ինդեքսը կկազմի 96,2, հետևաբար, 1937 թ. կլոր թվով՝ 4%-ով ավելի քիչ բանվորներ են զբաղված յեղել, քան 1929 թվականին: Ցեթե մենք ընդսմին հաշվի առնենք աշխատանք վորոնողների թիվը՝ ի հետևումն բնակչության 8 տարում ունեցած բնական աճի, այլև ավելացնենք վարձու աշխատանքով զբաղվելու հարկադրված մարդկանց թվին ճգնաժամի պատճառով քայքայված ֆերմերների, արհեստավորների, մանր առևտրականների և այլոց նշանակելի քանակը, ապա հասկանալի կդառնա գործազուրկների այսպիսի վիթխարի բանակի առկայությունը: Ամերիկյան բանվոր դասակարգի ռեալ յեկամուտը 1937 թ. ակներևորեն ավելի ցածր է, քան 1929 թվականին՝ ի հետևումն խրոնիկական մասսայական գործազրկության և այս պատճառով՝ աշխատանքի վատթարացող պայմանների. պարզ է, վոր սպառման միջոցների վաճառահանությունը սահմանափակված է յեղել պրոլետարական մասսաների յեկամուտների քչացումով ավելի առաջ, քան ԱՄՆ-ի արդյունաբերա-

---

1 «Ամերիկեն ֆեդերեյշոնիստ» 1937 թ. հոկտեմբեր: 1929 թ. տվյալները, հավանորեն, փոքրացված են:

2 «Կոնֆերենս բորդ բուլետին», 1937 թ. մայիսի 24:

կան արտադրանքը բնակչության մի հոգու համար հասել է 1929 թվականի մակարդակին:

Արդյունաբերական ապրանքների վաճառահանության սահմանափակման յերկրորդ կարևոր գործոնը հանդիսանում է ամերիկյան ֆերմերների նշանակելիորեն նվազած յեկամուտը:

Այս մասին խոսում է հետևյալ աղյուսակը.

| Թվականներ | Ֆերմերների փողային յեկամուտը (միլիոն դոլարներով [1]) | Այն գների ինդեքսը, որ վճարում են ֆերմերները [2] |
|---|---|---|
| 1929 | 10,479 | 153 |
| 1930 | 8,451 | 145 |
| 1931 | 5,899 | 124 |
| 1932 | 4,328 | 107 |
| 1933 | 5,117 | 109 |
| 1934 | 6,348 | 123 |
| 1935 | 7,090 | 125 |
| 1936 | 7,865 | 124 |
| 1937 (առաջին 11 ամիսները) | 7,862 | |

Աղյուսակը ցույց է տալիս, որ ֆերմերների փողային յեկամտի գնողական ուժը, հաշվի առնելով նրանց կողմից գնվող ապրանքների գների անկումը, վերջին 7 տարում անփոփոխորեն ավելի ցածր է յեղել, քան 1929 թվականին՝ 1—2 միլիարդ դոլարով: Նշանակում է, ֆերմերները յուրաքանչյուր տարի ստիպված են յեղել գնելու արդյունաբերական ապրանքներ միքանի միլիարդ դոլարով ավելի քիչ, քան 1929 թվականին: 1937 թ. առաջին կիսամյակում ֆերմերների դրությունը բարելավվեց. բարձրացան հացի և գյուղատնտեսության այլ միքանի պրոդուկտների գները:

1 «Ագրիկուլչերել սիտյուեյշն», 1937 թ. մարտ, եջ 22 (ներառյալ կառավարության կողմից վճարվող դոտացիաները՝ իբրև կոմպենսացիա ցանքային տարածությունը սահմանափակելու համար):

2 «Ֆարմ իմպլեմենտ նյուզ» 1937 թ. ոգոստոսի 26, եջ 32 (1909 թվի ոգոստոսից—1914 թ. հուլիսը=100): 1937 թ. վերաբերյալ՝ «Աննալիստ» 1937 թ. դեկտեմբերի 31:



Սակայն այդ բարելավումը նորից վերածվեց դերոյի՝ բամբակի և այլ գյուղատնտեսական ապրանքների գների սրընթաց անկումով 1937 թ. աշնանը:

Այս յերեք գործոնները—հիմնական կապիտալի նորոգման ու ընդլայնման շատ աննշան աստիճանը, խրոնիկական մասսայական գործազրկությունը և ֆերմերական յեկամուտների կրճատումը ագրարային ճգնաժամի հետևանքով—վճռական դեր խաղացին այն բանում, որ տնտեսական նոր ճգնաժամը պայթեց ավելի առաջ, քան ձեռք բերվեց 1929 թ. բարձրագույն կետը:

Ժողովրդական լայն մասսաների անբավարար յեկամուտի հետ սերտորեն կապակցված է նաև այդ ցիկլի համար բնորոշ բնակարանային շինարարության չափազանց աննշան մակարդակը: Համաձայն Ֆեդերալ ռեզերվային Ֆոնդի ինդեքսի (1923—1925 թ.թ. =100)՝ բնակարանային շինարարության բարձրագույն կետը նախորդ ցիկլում ձեռք է բերված յեղել 1928 թ. 126 մակարդակով: Իսկ այժմ ավարտված ցիկլում բնակարանային շինարարության ինդեքսը կազմում էր.

| 1930 թ. | 1931 թ. | 1932 թ. | 1933 թ. | 1934 թ. | 1935 թ. | 1936 թ. | 1937 թ. (առաջին 9 ամիսը) |
|---|---|---|---|---|---|---|---|
| 50 | 37 | 13 | 11 | 12 | 21 | 37 | 45 |

Ինչպես տեսնում ենք, շինարարությունը միջին առումով ամբողջ ցիկլի ընթացքում կազմել է 1923—1925 թ.թ. շինարարության 1/3-ից պակասը և նախորդ ամբողջ ցիկլի միայն մոտ 1/5-ը: Իսկ ամերիկյան մամուլի մասնագիտական որդանների բազմաթիվ հաշվարկումներով՝ նորապսակների բնակարանային կարիքը բավարարելու, անպետքացած բնակելի տները փոխարինելու և վողորմելի հետնախորշերում (трущоба) ապրող չքավորներին ապահովելու համար պահանջվում էին կամ պահանջվում են միքանի միլիոն բնակարաններ: Այս ամբողջ ժամանակը կառուցողական արդյունաբերությունը դրեթե անշարժ կանգ է առել մեռյալ կետում, թեև առկա յե յեղել բնակարանային շինարարու-

թյան աճման գլխավոր պայմաններից մեկը—փոխատու կապիտալի առատությունը և տոկոսային ցածր դրույքը: Ամերիկյան մամուլը սրանում մեղադրում է կառուցողական բանվորների իբրև թե բարձր դրույքները և շինանյութերի՝ մոնոպոլիաների կողմից ուռճրած գները: Վերջին հանգամանքը վորոշ դեր կարող է խաղալ, սակայն վճռական նշանակություն ունեցողը այն փաստն է, վոր խրոնիկական մասսայական գործազրկության հետևանքով, աշխատավոր լայն մասսաների ցածր յեկամտի հետևանքով, չկա բնակարանների վճարունակ պահանջարկ: Ուստի և, բոլոր հաշվարկումների համաձայն, դոյություն ունեցող բնակարանային սուբ կարիքը տնտեսապես անհրաժեշտ ներդրություն չի կատարում:

Արժեթղթերի կուրսերի խիստ անկումը այս տարի հանդիսանում է մի նոր գործոն, վորը սահմանափակում է արդյունաբերական ապրանքների վաճառահանության հնարավորությունը: Նյու-Յորկի բորսայում ռեգիստրացիայի յենթարկված ակցիաների կուրսային արժեքն ընկավ փետրվարի վերջի բարձրագույն կետից 36%-ով նոյեմբերի վերջին, վոր նշանակում է 23 միլիարդ (կլոր հաշվով) դոլլարի նոմինալ կորուստ: Ըստինքյան հասկանալի յե, այդ կորուստը զուտ ֆիկտիվ է: Յերկրի ռեալ ստացվածքին ամենաչնչին չափով անգամ չի դիպել բորսայական կրախը:

Այդ, սակայն, բնավ էլ չի նշանակում, թե այսպիսի ուժ ունեցող բորսայական կրախը չի ազդում գործարար կոնյունկտուրայի վրա: Ակցիաների տերերը գտնում են,—և ճիշտ են գտնում իրենց անհատական տեսակետից վերցրած,—վոր ակցիաների կուրսի անկմամբ նրանք աղքատացան, ուստի և կրճատում են իրենց ծախսերը (թերևս բացառությամբ խոկական ֆինանսական արիստոկրատիայի): Առավել ևս, վոր նրանք փորձով գիտեն, թե ակցիաների կուրսերի այսպիսի անկման հետևանքով մոտակա տարիներին իրենց յեկամուտները դիվիդենդներից կենթարկվեն խիստ նվազեցման: Կառավարող դասակարգի ծախքերի այս կրճատումը II տարաբաժանման ապրանքների վերաբերմամբ,



առանձնապես պերճանքի առարկաների նկատմամբ, հանդիսանում է մի նոր մոմենտ, վորը նպաստում է վաճառահանության կապիտալիստական շուկայի նեղացմանը:

Ավելի ևս կարևոր է այն, վոր բորսայական կրախը նվազեցրեց կապիտալիստների առանց այն էլ աննշան հակումը՝ իրենց կապիտալը ոգտագործելու արտադրողական ձևով, իբրև ներդրումներ նոր ձեռնարկությունների մեջ: Բորսայական կրախը բուրժուազիայի արտահայտությամբ «կասեցնում է ձեռնարկատիրական գործունեությունը», այսինքն արգելակում է I տարաբաժանման ապրանքների պահանջարկը, և այս իմաստով հանդիսանում է մի գործոն, վորը արագացնում է գերարտադրության ճգնաժամի սկիզբը:

Վորոշ դեր է խաղում նաև եքսպորտի անկումը: 1927—1929 թ.թ. ԱՄՆ-ի եքսպորտի գումարն ամսական գերազանցում եր 400 միլիոն դոլլարից, իսկ 1936 թ. այդ գումարը կազմել է ընդամենը 210 միլիոն դոլլար: Վիթխարի՛ անկում, անգամ յեթե հաշվի առնենք գների իջեցումը (կլոր հաշվով 15%-ով հանդեպ 1929 թ.): 1937 թ. գարնանը և ամառն եքսպորտը ուժգնապես աճեց. սա սովորաբար տեղի յե ունենում, յերբ վորևե մեկ յերկրում գերարտադրության ճգնաժամը առաջ է հասունանում, քան կապիտալիստական մյուս յերկրներում: Այս դեպքերում, յերբ ներքին շուկայում արդեն կան պառկած ապրանքներ, ապրանքներն ուժգին չափով նետվում են համաշխարհային շուկա, վորը դեռևս կարող է կլանել նրանց:

Ամերիկյան եքսպորտի հետ մնալու պատճառներից մեկը, բացի կապիտալիստական բոլոր յերկրներին շոշափող ավտարկիայի և պրոտեկցիոնիզմի տենդենցից, հանդիսանում է կապիտալների եքսպորտի փաստական դադարեցումը: Յեթե իրև հիմք ընդունենք ԱՄՆ-ում արտասահմանի համար բաց թողնվող արժեթղթերի եմիսիան, ապա առանձնապես ուժեղ աչքի կընկնի այժմյան և նախորդ ցիկլերի միջև յեղած տարբերությունը: 1927—1929 թ.թ. ԱՄՆ-ում բաց են թողնված արտասահմանի համար 6,2 միլիարդ դոլլարի արժեթղթեր, 6 տարում (1932—1937 թ.թ.)— ընդ-

հանուր առմամբ—112 միլիոն, իսկ 1937 թ. 9 ամսում՝ 3 միլիոն դոլլարի։ Այդ, իհարկե, չի նշանակում, թե կապիտալների եքսպորտ ընդհանրապես չի յեղել։ Առանձին դեպքերում ամերիկյան կապիտալիստները կապիտալները զետեղել են արտասահմանում՝ չդիմելով եմիսիոն շուկային։ Մյուս կողմից՝ այլ յերկրների կապիտալիստներն ել նշանակելի չափով կապիտալներ են զետեղել ԱՄՆ-ում ամերիկյան արժեթղթեր հավաքաղնելու (скупка) միջոցով[1]։ Յեվ յեթե կապիտալների եքսպորտը ԱՄՆ-ից իրագործվել է առանց եմիսիոն շուկային դիմելու, ապա կապիտալների հոսանքը այլ յերկրներից դեպի ԱՄՆ-ը վոչ միայն ծածկել է այդ եքսպորտը, այլև այն կոմպենսել է հավելումով, վոր հաստատվում է վոսկու հսկայական հոսանքով դեպի յերկիրը[2]։ Կապիտալների եքսպորտի մեջ յեղած փաստական դադարը (նախորդ ճգնաժամին նախընթացած տարիների վիթխարի եքսպորտի համեմատությամբ) նշանակում է, վոր ամերիկյան բուրժուազիան զրկվել է իր ապրանքային եքսպորտը կապիտալների արտահանությամբ ամրապնդելու հնարավորությունից, վորով և մասամբ բացատրվում է ապրանքային եքսպորտի սաստիկ անկումը։

Ամերիկյան տնտեսության զարգացման ավելի մանրամասն անալիզը ցույց է տալիս, վոր գերարտադրության իսկական ճգնաժամի բոլոր նախադրյալները ԱՄՆ-ում առկա յեն յեղել։ Ամերիկյան տնտեսագետների հույսերը,—թե սա միայն կարճատև շեղում կլինի, ինչպես 1924 և 1927 թվերին եր, կամ թե չե, Ենգելսի տերմինաբանությամբ,

1 Պաշտոնական տվյալներով 1935 թ. վերջերին ԱՄՆ-ում ստարերկրյա յերկաթուղային կապիտալներդրումներ են յեղել 5035 միլիոն դոլլար, կարճաժամկետ՝ 1220 միլիոն դոլլար։ 1½ տարում, սկսած 1935 թ. վերջերից մինչև 1937 թ. հունիսը ներառյալ, ԱՄՆ-ում զետեղվել են ելի 2140 միլիոն դոլլար ստարերկրյա կապիտալներդրումներ՝ բանկային ավանդների և արժեթղթերի հավաքաղնման ձևով («Ֆեդերալ ռեզերվ բուլլետին», 1937 թ. հոկտեմբեր, եջ 998—1000)։

2 Վոսկու պաշարը ԱՄՆ-ում աճել է 1934 թվականի վերջերի 8,2 միլիարդ դոլլարից մինչև 12,7 միլիարդ դոլլարի 1937 թ. սեպտեմբերին։ 1937 թ. առաջին 9 ամսում վոսկու զուտ հոսանքը կազմել զրեթե 1,5 միլիարդ դոլլար։



միջանկյալ ճգնաժամ՝ ի հակադրումն մեծ ճգնաժամի,—հիմնավորված չեն։

Այս հաստատվում է նույնպես արդյունաբերական արտադրանքի, առանձնապես I ստորաբաժանման վերաբերյալ արտադրանքի, անսովոր անկումով։

Բերենք միքանի բնորոշ թվեր.

ՇԱՐԱԹԱԿԱՆ ԻՆԴԵՔՍՆԵՐԸ

| 1937 թ. | Ցնդեպատական ակտիվների ինդեքսը վուլֆերի (բաստ և նյու-Յորքի) | Ոչդեպատական ակտիվների ինդեքսը ամերիկյան կապիտալիստական արտադրության (%-ով)[1] | Բարձված վագոնների թվաքանակը |
|---|---|---|---|
| 4 սեպտեմբերի | 109,3 | 71,6 | 805 |
| 2 հոկտեմբերի | 103,5 | 66,1 | 847 |
| 6 նոյեմբերի | 93,5 | 41,0 | 732 |
| 13 » | 90,5 | 36,4 | 690 |
| 20 » | 89,5 | 31,0 | 647 |
| 27 » | 85,3 | 29,6 | 558 |
| 4 դեկտեմբերի | 84,8 | 27,5 | 633 |
| 11 » | 85,0 | 27,5 | 622 |
| 18 » | 85,0 | 23,5 | 603 |
| 25 » | 84,3 | 19,5 | 460 |
| 1 հունվարի 1938 թ. | 78,3 | — | — |

Այս թվերը խոսում են ընդհանրապես գործարար կոնյունկտուրայի սրընթաց անկման մասին 15%-ով, 10 շաբթում։ Բեռնաշրջանառությունը յերկաթուղիներում 3 ամսում նվազել է 20%-ով, իսկ պողպատաձուլական գործարանների արտադրական կարողության ոգտագործումը 11 շաբթում իջել է ավելի, քան կիսով չափ։ Անկման տեմպերը, առանձնապես պողպատաձուլական արդյունաբերությունը,

1 Յերկաթի և պողպատի ամերիկյան ինստիտուտի տվյալներով։

թյան մեջ, նշանակելիորեն ավելի բարձր են, քան 1929 թ. աշնանը:

II ստորաբաժանման ճյուղերի վերաբերմամբ չաբաթական տվյալներ չկան, իսկ ամսական տվյալներ կան առայժմ մինչև նոյեմբերը ներառյալ[1]:

ԱՄՆ, II ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԸ

| | 1937 թ. բարձրագույն կետը | 1937 թ. վերջին տվյալները | Անկման տոկոսը |
|---|---|---|---|
| Բամբակի սպառումը (հազար հակերով) | 779 (մարտ) | 485 (նոյեմբեր) | —37,7 |
| Բամբակեղենի արդյունաբերության բեռնավորումը (%-ով) | 148 (մարտ) | 111 (հոկտեմբեր) | —25,0 |
| Կոշկեղենի արտադրությունը (հազ. զույգերով) | 45946 (մարտ) | 33617 (սեպտեմբեր) | —26,8 |
| 1923—1925 թ. թ. ինդեքսը=100: Բրդի սպառումը | 139 (մարտ) | 96 (սեպտեմբեր) | —30,9 |
| Սննդի պրոդուկցիայի արտադրությունը | 99 (1936 թ. դեկտեմբեր) | 81 (հուլիս) | —18,2 |
| Կաշիների և կաշվե շինվածքների արտադրությունը | 136 (հունվարի) | 100 (սեպտեմբեր) | —26,5 |
| Ծխախոտի արտադրանքը | 183 (1936 թ. դեկտեմբեր) | 162 (սեպտեմբեր) | —11,5 |

Աղյուսակը ցույց է տալիս, որ II ստորաբաժանման մեջ ևս արտադրանքի անկումը արդեն չատ մեծ է[2]: Անկասկած, դեկտեմբերին արդյունաբերական արտադրանքը

1 Աղբյուրները. «Սերվեյ օֆ կերբենտ բիզնես» և «Ֆեդերալ ռեզերվ բուլլետին», 1937 թ. դեկտեմբեր:

2 «Աբհեստական մետաքսի մանածագործական ասոցիացիայի տվյալներով արհեստական մետաքսից պատրաստված գործվածքների առանձին տեսակների արտադրանքը 1937 թվականի բարձրագույն կետից իջավ 49—93%-ով («Ջոռնալ օֆ կոմերս» 1937 թ. նոյեմբերի 8, Նյու-Յորկ):



արդեն ընկել է ավելի ցածր, քան ամենամեծ անկման կետը XIX դարի ճգնաժամերի ժամանակ:

Արտադրության անկման տեմպն այժմյան ճգնաժամում չափազանց խիստ ձևով է պատկերանում.

ՖԵԴԵՐԱԼ ՌԵԶԵՐՎԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍԸ[1]

(1923—1925 թ. թ. = 100)

| | Ապրիլ | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր |
|---|---|---|---|---|---|
| Սեզոնային տատանումները բացառելով | 118 | 118 | 110 | 101 | 95-ից ցածր (նախնական գնահատումով) |
| Առանց սեզոնային տատանումները բացառելու | 125 | 114 | 106 | 99 | 95-ից ցածր (նախնական գնահատումով) |

Անկումը օգոստոսից սկսած ժամանակամիջոցում հրակայական է. չորս ամսում նա կազմել է (սեզոնային տատանումների ազդեցության ուղղումով) 20%-ից ավելի: Տարվա վերջերին այդ անկումը, պետք է կարծել, հասած է յեղել 25%-ի: Առանձնապես սաստիկ անկում է նկատվում պողպատի արտադրության մեջ: 1929 թ. վերջերում պողպատի արդյունաբերության բեռնավորումը կազմում էր տակավին 59%, 1937 թ. վերջին նա ընկավ մինչև 19,5%:

Բայց արտադրանքի այս արագ և ուժեղ իջեցումը I ստորաբաժնում առաջանում է վոչ միայն զուտ տնտեսական մոմենտներից. մեծ դեր են խաղում նաև քաղաքական մոմենտները—ամերիկյան խոշոր բուրժուազիայի ամենառեակցիոն մասի սաբոտաժը: Ամերիկյան ծանր արդյունաբերության (սև-մետաղագործության, ավտոմոբի-

լային արդյունաբերությունը և այլն) բանվորների միավորումը վորպես CYO («Կոմիտե արդյունաբերական արհմիություններ կազմակերպելու համար») առաջին անգամ Ամերիկայի պատմության մեջ հարկադրեց ծանր արդյունաբերության արքաներին ընդունել արհմիությունները և նրանց հետ կոլեկտիվ պայմանագրեր կնքել: Սրան նպաստեց—ի տարբերություն Կուլիջի և Հուվերի նախագահության ժամանակներից—Ռուզվելտի ադմինիստրացիայի բարյացակամ վերաբերմունքը դեպի արհմիությունները: Բայց նրանք կոլպայմանագրեր կնքեցին շատ կարճ ժամկետներով, մեծ մասամբ՝ մի տարով: Այժմ նրանք ոգտվեցին ճգնաժամից, վորպեսզի սկսեն բանվորներին խմբերով փողոց շպրտել: Նրանք արտադրանքը կրճատում են ավելի ուժեղ, քան դա պահանջում է տնտեսական անհրաժեշտությունը: Նրանք վաղաժամ փակում են ձեռնարկությունները: Նրանք ուզում են աշխատանքի շուկայում այնպիսի կացություն ստեղծել, վորի ժամանակ նրանք կարողանային գլուխները աղատել կոլպայմանագրերից, իսկ գուցե և՝ քայքայել նոր ինդուստրիալ արհմիությունները: Սրա հետ մեկտեղ նրանք աշխատում են ճգնաժամի պատասխանատվությունը դցել Ռուզվելտի կառավարության վրա, վորը իբրև թե կապիտալի վրա այնքան ծանր հարկեր է դնում, վոր արտադրությունը դառնում է վնասաբեր:

Խոշոր կապիտալի այս սաբոտաժի մասին շատ դեպքերում բացահայտորեն են խոսում. «New-York World Telegramm» լրագրի ֆինանսական խմբագիր Ռ. Մ. Գենդերշոտը 17. XI 1937 թ.[1] գրում է.

«Խոշոր մարդը («the big fellow») գործադուլ արեց. նա հարկադրված չէ վարել իր գործերը, վորպեսզի գոյություն ունենա: Նա կարող է ճգնաժամը կրել առանց մեծ դժվարությունների, ուստի և, նա ի վիճակի չէ սպասել, մինչև վոր հարկերը կփոխվեն համապատասխան նրա ցանկությունների»:

Ֆինանսական օլիգարխիայի վարած քաղաքականությունը սրում է ճգնաժամը ԱՄՆ-ում, այս քաղաքականությունը արտահայտվում է մանավանդ արտադրության միջոցների արտադրման չափազանց արագ իջեցմամբ:

Այստեղ, հարկավ, հարց է ծագում ճգնաժամի հետագա զարգացման հեռանկարների մասին ԱՄՆ-ում և նրա ազդեցության մասին կապիտալիստական այլ յերկրների վրա:

Բուն իսկ ԱՄՆ-ում՝ պայմանով, վոր այժմյան պատերազմները չեն վերածվի 1938 թվականին վճռական իմպերիալիստական յերկրների համընդհանուր պատերազմի՝ ճգնաժամը արտադրության բնագավառում, անկասկած, կլինի հենց այնպես խորը, ինչպես և 1929 թ. ճգնաժամը: Բոլոր այն գործոնները, վորոնք կազմել են առանձին տեսակի դեպրեսիայի եյությունը և հանգեցրել են ճգնաժամի ծագելուն՝ ավելի առաջ, քան ձեռք եր բերված 1929 թվականի բարձրագույն մակարդակը՝ պետք է իրենց հետևից առաջացնեն արտադրության վոչ պակաս խորը ճգնաժամ, քան նախորդը:

Կասկած չկա, վոր մասսայական գործազրկությունը, խոշոր բուրժուազիայի ամենառեակցիոն մասի սաբոտաժի հետևանքով, նոր ճգնաժամի պայմաններում ավելի մեծ ելնելու, քան նախորդ ճգնաժամում: Մոտավոր հաշիվներով՝ ճգնաժամի սկզբներին արդեն կային 8 միլիոնից անց գործազուրկներ, նրանց կմիանան զարձյալ նոր գործազուրկների միլիոնները:

Արդեն ճգնաժամի առաջին չարաթները, յերբ նրա բնույթը տակավին պարզ չեր, ամերիկյան բուրժուազիան սկսեց լայնորեն կիրառել իր ֆաբրիկաներն ու գործարանները բանվորական կրճատ ժամանակի փոխադրելը կամ դրանք փակել յերկու չաբաթով: Շուտով սկսվեցին նաև մասսայական արձակումները: Ազգային արդյունաբերական բյուրոյի տվյալներով՝ զբաղված բանվորների թիվը ապրիլի կեսերից մինչև նոյեմբերի կեսերը իջել է 6,4%-ով: Կրեյսլերի ավտոմոբիլային կոնցեռնը 1937 թ. նոյեմբերի 24-ին Դիտրոյիտում 55 հազ. բանվորներից արձակեց 10 հազարը, իսկ բանվորական չաբաթը պակասեցրեց մինչև 32 ժամի: «Ջեներալ Մոտորս» ֆիրման 1937 թ. վերջին

1 Մեջ է բերված «Դեյլի Ուորկեր»-ում 1937 թ. նոյեմբերի 18-ին

արձակեց 20 հազար բանվոր: Եդիսոնյան գործարաններում արձակվեցին 3500 բանվորներ, «Անակոնդի» պղնձահանքերում—1500, ռադիոգործարաններում—5500 և այլն: Արձակումների ալիքն ամեն որ մեծանում է: Պողպատաձուլական արդյունաբերության մեջ բանվորական շաբաթը դարձել է 20—25 ժամ և համապատասխանորեն իջեցված են 600 հազ. բանվորների դրույքները: Պողպատաձուլողների արհմիությունների հաշիվներով՝ այս արդյունաբերության մեջ արդեն «արձակուրդ են ստացել» 200 հազար մարդ[1]:

Համաձայն Մ. Մեսերիկի՝ պաշտոնական աղբյուրներից վերցված հաշվետվության՝ նոյեմբերի կեսերին ճգնաժամի հետևանքով 1 միլիոն բանվորներ ամբողջապես դադարեցրին դարձան, իսկ 1 միլիոնը փոխադրված են բանվորական կրճատ ժամանակի: Տարեվերջին ԱՄՆ-ում կային 12 միլիոնից վոչ պակաս գործազուրկներ:

ԱՄՆ-ում պետական վոչ մի ոժանդակություն գոյություն չունի գործազուրկների համար: Պետական-հասարակական աշխատանքների համապատասխան ընդլայնումը հասկիվ թե հնարավոր լինի՝ նկատի ունենալով բյուջետային մեծ դեֆիցիտը, վոր նկատվում է ցիկլի ամբողջ տևողության ընթացքում: Հետևաբար, գործազրկությունը ավելի ևս ծանրությամբ է հարվածելու ամերիկյան պրոլետարիատին, քան նախորդ ճգնաժամում: Պարզ է, բուրժուադիան, մանավանդ խոշոր մոնոպոլիստները, կոդտագործի ներկայացող դեպքը և կփորձի ի չիք դարձնել վերջին տարիներում ամերիկյան բանվորների ունեցած նվաճումները՝ արհմիությունների ճանաչումը և կոլեկտիվ պայմանագրերը: Դատակարգային պայքարի ուժեղացումն սրումը անխուսափելի է դառնում:

Նորից սաստիկ կսրվի ագրարային ճգնաժամը: Գների տարբերությունը (расхождение) արդեն սրվում է ի վնաս ֆերմերների: Բամբակի գները արդեն ավելի ցածր են, քան յերբևե ԱՄՆ-ի պատմության մեջ: Հացի գները չարունակում են տարբեր տատանումներով ընկնել, իսկ խոշոր արդյունաբերական մոնոպոլիաները առայժմ վոչ մի

1 «Թայմս», 1937 թ. նոյեմբերի 26:



հակում չեն ցուցաբերել՝ իջեցնելու գյուղացիների կողմից ստացվող ապրանքների գները: Մոտիկ ապագայում աշխատավոր գյուղացիության կացությունը անխուսափելիորեն սաստիկ կվատանա:

Ճգնաժամը արտադրության վոլորտում կապված է, ինչպես ցույց է տալիս բորսայական կուրսերի սաստիկ անկումը, վարկային վոլորտում յեղած ճգնաժամի հետ: Տվյալ մոմենտում չի կարելի նախագուշակել՝ կլինի՞ արդյոք այս ճգնաժամը այնպիսի՞ իսկ թափի, ինչպես նախորդը, վոր ուղեկցվեց բոլոր բանկերի փակումով 1933 թ. և դոլլարի արժեքազրկումով: Այդ կախված է շատ հանգամանքներից, մասամբ և այն միջոցներից, վոր կփորձի ձեռնարկել Ռուզվելտի կառավարությունը ճգնաժամի դեմ պայքարելու համար: Բայց նախորդ ճգնաժամի փորձը ցույց է տալիս, վոր բոլոր միջոցառումները, վորոնք ուղղված են վարկային ճգնաժամը կանխելու համար, միայն ձգձգում են նրա սկիզբը, իսկ այնուհետև նա պայթում է ել ավելի մեծ ուժով:

Այն փաստը, վոր գների մակարդակը ճգնաժամի սկզբին այնքան բարձր չի յեղել, ինչպես 1929 թ., առանձնապես յերբեք հաշվի առնենք դոլլարի 40-տոկոսյա արժեքազրկումը թույլ է տալիս սպասելու տոկոսային տեսակետից գների ավելի պակաս անկում ճգնաժամի պարագայում: Բայց վերջնական հաշվով վճռականը փողային ու վարկային վոլորտում յեղած ճգնաժամի աստիճանի համար լինելու յե արտադրության վոլորտում յեղած ճգնաժամի խորությունն ու սրությունը:

## ՍԿՍՎՈՂ ՃԳՆԱԺԱՄԻ ՍԻՄՊՏՈՄՆԵՐԸ ՄՅՈՒՍ ՅԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Կապիտալիստական եկոնոմիկայի զարգացման ընթացքը 1937 թ. պարզ կերպով խոսում է այն մասին, վոր բացի ԱՄՆ-ից մյուս կապիտալիստական յերկրներումն ել ճգնաժամի սիմպտոմներ կան, թեև նրանցում ճգնաժամը արտադրության վոլորտում դեռ չի պայթել բացահայտորեն:

Կարևորագույն նշանը հանդիսանում է վերջին 9 ամսվա ընթացքում բորսային բոլոր ապրանքների գների սաստիկ անկումը: Բերենք անգլիական բորսային ապրանքների գները. այդ գները, դեռևս մինչև այժմ, վճռական են կապիտալիստական աշխարհի համար.

ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԲՈՐՍԱՅԱԿԱՆ ԳՆԵՐԸ ԼՈՆԴՈՆՈՒՄ [1]

| | Բամբակ (պենսով մեկ ֆունտին) | Բուրդ (վերբեքս) | Գլինեմ (ֆունտ ստերլինգներով մեկ տոննան) | Ամոնիակ (ֆունտ ստերլինգներով մեկ տոննան) | Կաուչուկ (պենսով մեկ ֆունտին) | Կակաո (շիլինգներով մեկ ֆունտին) |
|---|---|---|---|---|---|---|
| | Լիվերպուլ | | Լոնդոն | | | |
| Մաքսիմալ գինը 1937 թ. | 8,19 | 40 | 77 | 306 | 13,5 | 53 |
| Գինը նոյեմբերի սկզբին | 4,50 | 32 | 42 | 201 | 7,5 | 27 |
| Գինը դեկտեմբերի սկզբին | 4,62 | 29 | 39 | 191 | 7,3 | 26,5 |

Այսպես ուրեմն, մենք տեսնում ենք, վոր ապրանքներից վոմանց գներն ընկել են կիսով չափ: Արդեն միայն այդ ցույց է տալիս, վոր ճգնաժամը վրա յե հասնում: Մյուս կողմից, գների անկումն իսկ իր հերթին ծառայում է իբրև գործոն ճգնաժամի կապերն արձակելու համար:

Գների անկումն այնքան մեծ է, վոր արդեն մենակ նա պետք է տանի դեպի վերարտադրության պրոցեսի ուժեղ կազմալուծումը: Այս առթիվ Մարքսը գրել է.

«Սրան միանում է այն, վոր գների վորոշ յենթադրական հարաբերություններն են պայմանավորում վերարտադրության պրոցեսը, և այդ պատճառով վերջինս գների ընդհանուր իջեցման հետևանքով դադարում է և յենթարկվում է կազմալուծման: Վերարտադրության պրոցեսի այս կազմալուծումը և դադարումը կասեցնում է փողի վորպես վճարման միջոցի ֆունկցիան, վոր զարգանում է կապիտալի զարգացման հետ միասին և հիմնվում է գների հին, հայալ յենթադրական հարաբերությունների վրա, հարյուրավոր տեղերում պատռում է վորոշ ժամկետներով վճարելու պարտավորությունների շղթան, ավելի ևս սրվում է սրան ուղեկցող՝ վարկային սիստեմի ցնցումով, մի սիստեմ, վոր զարգացել է կապիտալի հետ միասին, և այսպիսով հանգեցնում է ուժեղ ու սուր ճգնաժամերի, հանկարծակի բռնի արժեքազրկումների, վերարտադրության պրոցեսի իրական խափանման ու անկման և, սրա հետ մեկտեղ, վերարտադրության իրական կրճատման»[1]:

Վորպես վրա հասնող ճգնաժամի յերկրորդ կարևորագույն նշան հանդիսանում է ակցիաների կուրսերի սաստիկ անկումը, բորսային խուճապի կրկնվող դեպքերը վոչ միայն ԱՄՆ-ում, այլև բոլոր բորսաներում, վորտեղ ազատ շրջանառություն գոյություն ունի:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԱԿՑԻԱՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐԸ (1929 Թ. = 100)

| Յերկրները | Բարձրագույն միջին-ամսականը—1937 թ. | Վերջին ամիսը |
|---|---|---|
| Անգլիա | 121,6 (հունվար) | 99 (նոյեմբեր) |
| Ֆրանսիա | 52 — | 40,0 » |
| Շվեդիա | 84,8 (մարտ) | 69,7 » |
| Հոլանդիա | 73,2 (ոգոստոս) | 61,3 » |

Ակցիաների գների այս սաստիկ անկումը ցույց է տալիս, վոր յեվրոպական յերկրներումն ել բուրժուազիան զգում է տնտեսական ճգնաժամի մոտենալը և նախատեսում է ակցիաների բերած դիվիդենդների նվազում:

Իսկ ինչ վերաբերում է արտադրությանը, ապա մենք այստեղ կարող ենք հավաստել հետևյալը. 1937 թ. ընթացքում մի շարք յերկրներում արտադրության վերելքը կանգ առավ, իսկ մի շարք յերկրներում սկսվեց արտադրության

1 Վորովհետև խոսքը գների շարժման մասին է, մենք բերում ենք միատեսակ վորակ ունեցող ապրանքների միևնույն քանակի միայն բուն գները՝ առանց նրանց մատանշման:

1 Մարքս, Կապիտալ, հ. III, եջ 229, Համկ(բ)կ ԿԿ Կուսհրատ, 1936 թ.:

անկում։ Սակայն, ներկա մոմենտին տակավին պարզ չէ, նշանակո՞ւմ է այդ ճգնաժամի սկիզբ կամ թե չէ՝ մենք այստեղ գործ ունենք ժամանակավոր իջեցումների հետ։

Առայժմ յեվրոպական յերկրներում տեղի ունի վերելքի դադար միայն, և վոչ թե ճգնաժամի ծագում։ Բայց և այնպես, պարզ է, վոր ճգնաժամը ԱՄՆ-ում կարագացնի ճգնաժամի պայթումը կապիտալիստական մյուս յերկրներում՝ վորքան վոր այնտեղ ել ավելի կամ պակաս չափով նրա նախադրյալները արդեն հասունացել են։ Ամերիկյան ճգնաժամի ազդեցությունը կարտահայտվի այնքան շուտ, վորքան այս կամ այն յերկիրը տնտեսապես սերտորեն և կապված ԱՄՆ-ի հետ։

Ակներև է, վոր առաջին յերկրներից մեկը, վորտեղ կպայթի ճգնաժամը, լինելու յե Կանադան, վորը սերտորեն կապված է ԱՄՆ-ի հետ և վորոշ իմաստով, նույնիսկ, հանդիսանում է նրանց մասը։ Կանադայում մենք արդեն ունենք մի շարք փաստեր, ամենից առաջ ծանր արդյունաբերության մեջ, վորոնք խոսում են ճգնաժամի մոտենալու մասին։ Այսպես, որինակ, 1937 թ. հոկտեմբերի վերջերին յեղած 10 հրահալոցից (դոմնաներից) այնտեղ հանգցված է յեղել 4-ը։

Անգլիայում ճգնաժամի սկիզբը նույնպես առկա յե։ III յեռամսյակում (իսկ Անգլիան տալիս է արտադրության միայն յեռամսյակային ինդեքսները) ինդեքսը 2,5%-ով ավելի ցածր է յեղել, քան II յեռամսյակում։ Ամերիկյան ճգնաժամի ազդեցությունը արտահայտվում է յերկաթի ու պողպատի շուկայի վիճակի վրա։ Վերջին ամիսներում սկսվել է գործազուրկների թվի աճում, ըստ վորում՝ բավականին սրընթաց աճում. սեպտեմբերին գործազուրկների թիվը բարձրացավ 30 հազարով, հոկտեմբերին՝ 51 հազարով, նոյեմբերին՝ 109 հազարով, դեկտեմբերին՝ 135 հազարով։ Սրանք ճգնաժամի առաջին սիմպտոմներն են Անգլիայում։ Ակներև է, վոր ամերիկյան ապրանքների ուժգին մրցությունը համաշխարհային շուկայում, Անգլիայի կողմից չինական և ավելի ևս մեծ չափով ճապոնական շուկան կորցնելը, այլև բնակարանային շինարարության կրճատումը (բնակարանաշինարարությունը գրեթե ամբողջ տարվա ընթացքում չի զարգանում)—այս ամենը ցույց է տալիս, վոր Անգլիան ևս մոտենում է ճգնաժամին։ Նրա զարգացման վորոշ հապաղումը բացատրվում է ռազմական բնույթի վիթխարագույն պատվերներով։

Կարելի յե յենթադրել, վոր Յեվրոպայում ճգնաժամը, բացի Անգլիայից, առաջին հերթին կհարվածի հյուսիսային յերկրներին—Շվեդիային, Ֆինլանդիային, Նորվեգիային, Դանիային ու Բելգիային։ Այս յերկրներում, վորտեղ տեղի յե ունեցել վերջին ցիկլի ամենից ավելի «նորմալ» զարգացումը, ճգնաժամի նախադրյալները նույնպես առկա յեն։ Շվեդիայում արդեն կան ճգնաժամի բավականին բացահայտ նշաններ ծանր արդյունաբերության մեջ։ Վաղուց չէ, վոր այնտեղ պողպատի դները մեկեն իջան 15%-ով։ Յերբեմն 2—3 ամիս սրանից առաջ Շվեդիայում անդադար ամեն որ խոսում եյին յերկաթի լոմի պակասության մասին, ապա այժմ նրա առատություն կա։ Այդ կապված է այն բանի հետ, վոր ԱՄՆ-ը համաշխարհային շուկա յե նետում հսկայական քանակությամբ լոմ, իսկ այն ճնշում է Շվեդիայի ծանր արդյունաբերության վրա։

Ճգնաժամը զանց չի առնի նաև ֆաշիստական յերկրները, վորոնց տնտեսությունը գտնվում է բացառապես լարված վիճակում։

Այդ յերկրներում բուրժուազիան հաստատել է ֆաշիստական դիկտատուրա։ Բայց նրանց եկոնոմիկան չի տարբերվում կապիտալիստական մյուս յերկրների եկոնոմիկայից։ Ֆաշիստական յերկրների տնտեսության առանձնահատկությունն այն է, վոր այդ տնտեսությունն արդեն ձեվափոխված է դեպի ռազմական տնտեսության կողմը։ Այդ նշանակում է, թե ֆաշիստական տնտեսությունը հիշեցնում է տնտեսությունը կապիտալիստական ամեն մի յերկրի, վո-

---

1 «Եկոնոմիստի» ինդեքսը 1937 թ. դեկտեմբերի մասին կազմում էր 110,5 ընդդեմ 113,5-ի սեպտեմբերին։ Տեքստիլ արդյունաբերությունը Լանկաշիրում մասնակի (5 միլիոն իլիկ) կանգնեցրեց աշխատանքը յերկու շաբաթով ապրանքների դերարտադրության պատճառով («Թայմս» փետրվարի 1, էջ 38)։

անկում։ Սակայն, ներկա մոմենտին տակավին պարզ չէ, նշանակո՞ւմ է այդ ճգնաժամի սկիզբ կամ թե չէ՝ մենք այստեղ գործ ունենք ժամանակավոր իջեցումների հետ։

Առայժմ յեվրոպական յերկրներում տեղի ունի վերելքի դադար միայն, և վոչ թե ճգնաժամի ծագում։ Բայց և այնպես, պարզ է, վոր ճգնաժամը ԱՄՆ-ում կարագացնի ճգնաժամի պայթումը կապիտալիստական մյուս յերկրներում՝ վորքան վոր այնտեղ ել ավելի կամ պակաս չափով նրա նախադրյալները արդեն հասունացել են։ Ամերիկյան ճգնաժամի ազդեցությունը կարտահայտվի այնքան շուտ, վորքան այս կամ այն յերկիրը տնտեսապես սերտորեն է կապված ԱՄՆ-ի հետ։

Ակներև է, վոր առաջին յերկրներից մեկը, վորտեղ կպայթի ճգնաժամը, լինելու յե Կանադան, վորը սերտորեն կապված է ԱՄՆ-ի հետ և վորոշ իմաստով, նույնիսկ, հանդիսանում է նրանց մասը։ Կանադայում մենք արդեն ունենք մի շարք վաստեր, ամենից առաջ ծանր արդյունաբերության մեջ, վորոնք խոսում են ճգնաժամի մոտենալու մասին։ Այսպես, որինակ, 1937 թ. հոկտեմբերի վերջերին յեղած 10 հրահանգից (դոմնաներից) այնտեղ հանդցված է յեղել 4-ը։

Անգլիայում ճգնաժամի սկիզբը նույնպես առկա յե։ III յեռամսյակում (իսկ Անգլիան տալիս է արտադրության միայն յեռամսյակային ինդեքսները) ինդեքսը 2,5%-ով ավելի ցածր է յեղել, քան II յեռամսյակում։ Ամերիկյան ճգնաժամի ազդեցությունը արտահայտվում է յերկաթի ու պողպատի շուկայի վիճակի վրա։ Վերջին ամիսներում սկսվել է գործազուրկների թվի աճում, ըստվորում՝ բավականին սրընթաց աճում. սեպտեմբերին գործազուրկների թիվը բարձրացավ 30 հազարով, հոկտեմբերին՝ 51 հազարով, նոյեմբերին՝ 109 հազարով, դեկտեմբերին՝ 135 հազարով։ Սրանք ճգնաժամի առաջին սիմպտոմներն են Անգլիայում։ Ակներև է, վոր ամերիկյան ապրանքների ուժգին մրցությունը համաշխարհային շուկայում, Անգլիայի կողմից չինական և ավելի ևս մեծ չափով ճապոնական շուկան կորցնելը, այլև ընակարանային շինարարության կըրճատումը (ընակարանաշինարարությունը գրեթե ամբողջ տարվա ընթացքում չի զարգանում)—այս ամենը ցույց է տալիս, վոր Անգլիան ևս մոտենում է ճգնաժամին։ Նրա զարգացման վորոշ հապաղումը բացատրվում է ռազմական բնույթի վիթխարագույն պատվերներով։

Կարելի յե յենթադրել, վոր Ցեվրոպայում ճգնաժամը, բացի Անգլիայից, առաջին հերթին կհարվածի հյուսիսային յերկրներին—Շվեդիային, Ֆինլանդիային, Նորվեգիային, Դանիային ու Բելգիային։ Այս յերկրներում, վորտեղ տեղի յե ունեցել վերջին ցիկլի ամենից ավելի «նորմալ» զարգացումը, ճգնաժամի նախադրյալները նույնպես առկա յեն։ Շվեդիայում արդեն կան ճգնաժամի բավականին բացահայտ նշաններ ծանր արդյունաբերության մեջ։ Վաղուց չէ, վոր այնտեղ պողպատի դները մեկեն իջան 15%-ով։ Ցեթե 2—3 ամիս սրանից առաջ Շվեդիայում անդադար ամեն որ խոսում եյին յերկաթի լոմի պակասության մասին, ապա այժմ նրա առատություն կա։ Այդ կապված է այն բանի հետ, վոր ԱՄՆ-ը համաշխարհային շուկա յե նետում հսկայական քանակությամբ լոմ, իսկ այն ճնշում է Շվեդիայի ծանր արդյունաբերության վրա։

Ճգնաժամը դանց չի առնի նաև ֆաշիստական յերկրները, վորոնց տնտեսությունը գտնվում է բացառապես լարված վիճակում։

Այդ յերկրներում բուրժուազիան հաստատել է ֆաշիստական դիկտատուրա։ Բայց նրանց եկոնոմիկան չի տարբերվում կապիտալիստական մյուս յերկրների եկոնոմիկայից։ Ֆաշիստական յերկրների տնտեսության առանձնահատկությունն այն է, վոր այդ տնտեսությունն արդեն ձևափոխված է դեպի ռազմական տնտեսության կողմը։ Այդ նշանակում է, թե ֆաշիստական տնտեսությունը հիշեցնում է տնտեսությունը կապիտալիստական ամեն մի յերկրի, վո-

1 «Եկոնոմիստի» ինդեքսը 1937 թ. դեկտեմբերի մասին կազմում եր 110,5 ընդդեմ 113,5-ի սեպտեմբերին։ Տեքստիլ արդյունաբերությունը Լանկաշիրում մասնակի (5 միլիոն իլիկ) կանգնեցրեց աշխատանքը յերկու շաբաթով ապրանքների դերարտադրության պատճառով («Թայմս» փետրվարի 1, եջ 38)։

ը գտնվում է պատերազմական վիճակում։ Իսկ ինչո՞վ է բնորոշվում պատերազմական վիճակում գտնվող կապիտալիստական յերկրների տնտեսությունը։

Իմպերիալիստական եպոխայի և առանձնապես ընդհանուր ճգնաժամի ժամանակաշրջանի կապիտալիստական ե-կոնոմիկան սովորաբար այնպիսի վիճակումն է գտնվում, յերբ ապրանքների առաջարկը գերազանցում է պահանջարկին։ Խոսքը, իհարկե, վճարունակ պահանջարկի մասին է, և վոչ թե առհասարակ պահանջարկի մասին։ Իսկ ի՞նչ վիճակումն է գործը այդ հիմնական հակասության տեսակետից այն ժամանակաշրջանում, յերբ կապիտալիստական յերկիրը գտնվում է մեծ պատերազմի կացության մեջ։ Արդի բանակների հսկայական պահանջարկը շուկայի այնպիսի ընդլայնում է տալիս, վոր պահանջարկը առաջարկից ավելի յե դառնում։ Այս բանը տեղի յե ունենում վոչ միայն այն պատճառով, վոր հավելադիր պահանջարկ է դոյանում բուն իսկ պատերազմը վարելու համար, այլև այն պատճառով, վոր բանվորական ուժի մեծ մասը խլվում է արտադրությունից և ուղարկվում է ճակատ, և արտադրությունը բանվորական ուժի պակասության պատճառով կըճատվում է։ Վերջին համաշխարհային պատերազմի տարիներին բոլոր յերկրների կապիտալիստական տնտեսությունը հարկադրված եր լուծել այն պրոբլեմը, թե վորտեղից վերցնել հումք ու ապրանքներ։ Հարկ եր լինում սահմանափակել բոլոր պրոդուկտների սպառումը նրա համար, վորպեսզի արտադրությունը կարողանար բավարարել ռազմական պահանջարկին։

Ֆաշիստական յերկրների տնտեսությունը բուրժուա-դեմոկրատական յերկրների մեծամասնության տնտեսությունից հենց նրանով է տարբերվում, վոր առաջինները արդեն իսկ հսկայական ռազմական պահանջարկ ունեն, պահանջարկ սպառազինման նպատակների համար։

Վերցնենք Ֆաշիստական Գերմանիան։ Նա առայժմ միայն մասնակցում է Իսպանիայում կատարված ինտերվենցիային։ Բայց և այնպես, Ֆաշիստական Գերմանիայի ռազմական ծախսերը հսկայական են։ Ինչո՞ւմն է այդ արտահայտվում։

Այնտեղ գոյություն ունեցող որենքներով՝ դյուղատնտեսական բոլոր ապրանքները պետք է մատակարարվեն միայն պետությանը։ Գերմանական դյուղացին զրկված է իր աշխատանքի արդյունքները ազատորեն վաճառելու հնարավորությունից։ Անգամ դյուղատնտեսական այնպիսի ապրանքներ, ինչպես ձուն ու կաթն են, դյուղացին իրավունք չունի շուկայում վաճառելու։

Արդյունաբերական ամբողջ հումքը բաշխվում է տրեստների ու կապիտալիստական կազմակերպությունների միջոցով՝ գլխավոր շտաբի հսկողությամբ և գնում է ըստ պառազինման կարիքների վրա։ Գոյություն ունի արդյունաբերական զանազան ապրանքների մի յերկար ցուցակ, վորոնց արտադրման ժամանակ արգելվում է գործադրել յերկաթ, պղպատ կամ պղինձ։ Արտաքին առևտուրն ու վալյուտան անմիջականորեն պետությունն է կարգավորում։ Գերմանական կապիտալիստը իրավունք չունի ապրանք վաճառելու արտասահման առանց լիցենզիայի (հատուկ թույլտվության) կամ ապրանք գնել առանց համապատասխան պետական կազմակերպությունների թույլտվության։

Իսկ վո՞րտեղից է Ֆաշիստական Գերմանիան վերցրել այն վիթխարի միջոցները, վոր վերջին 4—5 տարիների ընթացքում ծախսված են սպառազինումների վրա և նոր մասսայական բանակ ստեղծելու վրա։ Գերմանիայում ներկայումս աշխատում են մոտավորապես 4 միլիոն բանվորներ ավելի, քան 1932 թվականին։ Այն ժամանակ այդ մարդիկ գործազուրկներ եյին։ Բայց ամբողջ բանվոր դասակարգը—և՝ աշխատողները, և՝ գործազուրկները միասին—1937 թ. ռեալ յեկամուտ է ստանում վոչ ավելի, քան 1929 թվականին։ Արտադրության մեջ զբաղված են բանվորներ՝ 4 միլիոն մարդով ավելի, բայց հավելադիր այս բանվորների համար գերմանական բուրժուազիան փաստորեն վոչինչ չի վճարում։ Ցեթե գնահատենք,—իհարկե մոտավորապես,—գերմանական մի բանվորի տարեկան ստեղծած արժեքը մոտ 2 հազար մարկ, ապա այդ 4 միլիոն բանվոր-

ների աշխատանքի հետևանքը ստացվում է 8 միլիարդ մարկի ֆոնդ: Հենց այս էլ հանդիսանում է տնտեսական այն աղբյուրը, որի հաշվին զինվում է ֆաշիստական Գերմանիան: Սրան պետք է ավելացնել նաև յեկամուտների այն մասը, որ ֆաշիզմը ստանում է գյուղացիությանը կողոպտելու հետևանքով:

Վոչ մի պետություն պատերազմը տանուլ չի տալիս փող չլինելուց: Միշտ կարելի յե փող տպել և բաց թողնել փոխառություններ: Ֆինանսական մանիպուլացիաներ միշտ կարելի յե կիրառել, յեթե կա համապատասխան տնտեսական բազա: Այսպիսով, ինչ գերմանական տնտեսությանն է վերաբերում, ապա այստեղ հարցը այսպես է դրված. Վո՞ր քան յերկար ժամանակ գերմանական եկոնոմիկան կարող է մնալ այլանդակված այնպիսի ձևով, յերբ արտադրության պրոդուկտների ահռելի մասը վերածվում է պատերազմի միջոցների:

Ուստի և, զերարտադրության սովորական ճգնաժամ Գերմանիայում չի կարելի սպասել: Բայց այդ չի նշանակում, թե ԱՄՆ-ում սկսված ճգնաժամը չի դիպչի ֆաշիստական Գերմանիայի տնտեսությանը: Վրա հասնող ճգնաժամը, ըստ յերևութին, իր ազդեցությունը կունենա ամենից առաջ Գերմանիայի արտաքին առևտրի վրա, որովհետև Գերմանիան համաշխարհային շուկա յե արտահանում հենց I ստորաբաժանման այնպիսի ապրանքներ, որպիսիք այժմ շատ ավելի ցածր գներով շուկա յեն նետում ԱՄՆ-ը: Դրանք՝ յերկաթը, պողպատը, յերկաթե խողովակները, մեքենաները, ելեկտրական ապրանքներն են և այլն: Այս բնագավառում ԱՄՆ-ի մրցությունը ուժգնորեն ճնշելու յե Գերմանիայի վրա, առավել ևս, որ փոխատու կապիտալի հսկայական ավելցուկներ ունեցող ԱՄՆ-ը կարող են այս ապրանքները վաճառել վարկով, այնինչ գերմանական կապիտալիստները չունեն այդ հնարավորությունը:

Փոքր ինչ այլ դրության մեջ է գտնվում ֆաշիստական Իտալիան: Այս յերկիրն արդեն յերկու-յերեք տարվա ընթացքում գտնվում է պատերազմի վիճակում: Պատերազմը Հաբեշստանում ձևականորեն ավարտված է, բայց փաստորեն այնտեղ դեռևս մեծ ոկուպացիոն բանակ է պահվում: Պետք է նկատի ունենալ, որ Հաբեշստանը՝ դա մի խոշոր յերկիր է, որտեղ չկան յերկաթուղիներ, որտեղ պետք է չլինել խճուղիներ, որտեղ ժողովուրդը թշնամաբար է վերաբերվում դեպի ոկուպանտները:

Հաբեշստանում, մի գուցե, կան բնական հարստություններ, հումքի աղբյուրներ, բայց վորպեսզի այս պոտենցիալ հնարավորությունից ռեալ յեկամուտ ստացվի, Իտալիան պետք է մեծ միջոցներ ծախսի: Ուստի և, ֆաշիստական Իտալիան, որ այժմ եքսպեդիցիոն կորպուսներ է ուղարկում Իսպանիա, որ շարունակում է Հաբեշստանի ոկուպացիան և այսպես կոչված «մեծ պատերազմի» կատաղորեն պատրաստումը, աղքատացել է նշանակելիորեն ավելի, քան Գերմանիան: Ընդսմին պետք է հաշվի առնել, որ Իտալիան ունի անհամեմատ ավելի քիչ բնական հարստություններ, քան Գերմանիան:

Իտալիայում չկան վոչ յերկաթ, վոչ քարածուխ, վոչ էլ այլ հանածոներ: Ամեն ինչ պետք է ներմուծել արտասահմանից: Ուրիշ խոսքերով՝ ֆաշիստական Իտալիան չունի սեփական բազա յերկրի ինդուստրիայի համար: Ներմուծելով, որինակ, յերկաթ, նա այն վերամշակում է և դարձնում պողպատ, արտադրում է ավտոմոբիլներ, ելեկտրոսարքավորում և այլն ու արտահանում է այդ ապրանքները: Մինչդեռ, սկսված ճգնաժամը սրում է մրցությունը համաշխարհային շուկայում հենց այնպիսի ապրանքների վերաբերմամբ, որոնք կազմում են իտալական արտահանության հիմունքը: Այդ անկասկած ավելի ևս կբարդացնի Իտալիայի առանց այն էլ շատ լարված, ֆինանսական կացությունը:

Յեվ, վերջապես, յերրորդ ֆաշիստական յերկիրը—Ճապոնիան—հանդիսանում է մի այնպիսի յերկիր, որը հումքի վոչ մի աղբյուր չունի, բացի մետաքսից: Ճապոնիան ներմուծում է տեքստիլի հումք, յերկաթ, գունավոր մետաղներ, նավթ և, մասնակի, փայտեղեն: Այդ մի յերկիր է, որտեղ դասակարգային հակասությունները հանդիսանում են ամենասուրը՝ աշխարհում: Ճապոնիայի գյուղատնտեսական բնակչության գրեթե 30%-ը բոլորովին հող

չունի: Հողի մեծ մասը գտնվում է կալվածատերերի ձեռքում: Ֆաբրիկաներն ու գործարանները կենտրոնացված են կապիտալիստների մի փոքրիկ խմբի ձեռքում: Միքանի խոշոր կոնցերններ կառավարում են յերկրի բովանդակ տնտեսական կյանքը:

Ճապոնիան արդեն փաստորեն պատերազմ է մղում միքանի տարի շարունակ: Վորոշ դադարից հետո նա լայն ճակատով պատերազմական գործողություններ ծավալեց Չինաստանում: Չի կարելի ասել, թե արդեն հենց այս է այն «մեծ պատերազմը», վորի մասին այնքան խոսում է-յին իմպերիալիստական Ճապոնիայի ամենառեակցիոն ներկայացուցիչները: «Մեծ պատերազմ» նշանակում է ամբողջ արական բնակչության ընդհանուր զորահավաք: Ինչպես հայտնի յե, համաշխարհային պատերազմին մոբիլիզացիա յեր յենթարկված բնակչության 10%-ը, իսկ առանձին յերկրներում նույնիսկ ավելի: Ճապոնիայում այդ բանը դեռ չկա:

Զուսենալով ճշգրիտ տվյալներ ճապոնական այն զորքերի քանակի մասին, վորոնք կռվում են Չինաստանում, բայց և այնպես, տարբեր գնահատումներով նրանց կազմը կարելի յե որինակի կերպով վորոշել 1 միլիոն հոգի՝ սրա մեջ ներառելով և Մանջուրիայում յեղած բանակը: Մի այսպիսի բանակ պահելը ճապոնական տնտեսությունը արդեն դցել է բացառիկ լարվածության վիճակի մեջ:

Տվյալ մոմենտին Ճապոնիայի միջազգային դրությունը այնպիսին է, վոր նա վարկեր ու փոխառություններ չի ստանում, վորովհետև պատերազմը Չինաստանի դեմ մեծ վնաս է հասցնում Անգլիայի, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի և յեվրոպական այլ յերկրների տնտեսական շահերին: Չնայած այն բանին, վոր վոչ անգլիական, վոչ ամերիկական կառավարությունները տակավին չեն վճռել բոյկոտ հայտարարել ճապոնական ապրանքներին՝ այդ յերկրները ճապոնական կառավարությանը վարկեր չեն տալիս: Սրա հետևանքով ամեն շաբաթ Ճապոնիայից միքանի միլիոն լեն վոսկի յե ուղարկվում: Իր տնտեսության այսպիսի լարված վիճակին Ճապոնիան յերկար ժամանակ դիմանալ չի կարող:



Արդեն այժմ Ճապոնիան սաստիկ կրճատում է ապրանքների ներմուծումը: Ներմուծվում է միայն այն, ինչ անմիջականորեն գնում է պատերազմի համար: Անկասկած է, վոր այժմյան պատերազմը Չինաստանում շատ ուժգին կթուլացնի Ճապոնիայի տնտեսական հզորությունը և սաստիկ կսրի դասակարգային պայքարը յերկրում: Բանվորների ու գյուղացիների սպառումը, վորոնց կացությունը մինչև պատերազմն ել սոսկալի յե յեղել, ներկայումս սաստիկ կրճատվում է:

Այն հույսերը, թե Հյուսիսային Չինաստանի ոկուպացիան ճապոնական իմպերիալիստներին հնարավորություն կտա ոգտագործելու այդ ռայոնների տնտեսական հարստությունները՝ պատերազմական ուռած ծախքերը ծածկելու համար, վոչ մի չափով չարդարացան:

Չինաստանը բնական մեծ հարստությունների տեր յերկիր է: Բայց մեկեն նրանց շահագործման ձեռնարկելը անկարելի յե առանց խոշոր նոր ներդրումների: Ընդամենը, չինական ձեռնարկությունների և հանքավայրերի մեծամասնությունը գտնվում է ոտարերկրացիների ձեռքում: Իհարկե, յեթե Ճապոնիային հաջողվեր, ինչի մասին և նա յերազում է, Չինաստանը դարձնել իր գաղութը, այն ժամանակ նա կստանար տնտեսական մեծ ռեսուրսներ: Բայց դրա համար հարկավոր է, վոր Չինական ժողովուրդը հաշտվեր Ճապոնական տիրապետության հետ, իսկ այդ բանը չի լինելու:

Ճապոնիան դաշինքի մեջ է Ֆաշիստական Գերմանիայի ու Իտալիայի հետ: Բայց այդ դաշնակիցները արդյոք կարող կլինե՞ն ոգնել Ճապոնիային: Իտալիան այդպիսի ռեսուրսներ չունի: Նա ինքը աղքատ է: Գերմանիան, իհարկե, տեսականորեն կարող եր Ճապոնացիներին տալ յերկաթ ու պողպատ, բայց իր իսկ Գերմանիայի պահանջմունքը սպառազինումների վազքի կապակցությամբ այնքան է ուժեղ և նրա կախումը Շվեդիայից, Ֆրանսիայից, Իսպանական Մարրոկոյից յերկաթահանք ներմուծելու մեջ այնքան մեծ է, վոր նա չի կարողանա Ճապոնիային ցույց տալ զգալի ոգնություն:

Յեթե Ճապոնիայի արտադրանքը մինչև այժմ տակա-

վին չի կրճատվել, ապա դա չի նշանակում, թե նա չի կարող յենթարկվել ճգնաժամի ազդեցությանը: Այդ արտադրանքը գնում է առավելապես պատերազմի նպատակների համար: Զինական շուկան այժմ փակ է ճապոնական ապրանքների համար: Ճգնաժամի սկիզբը ԱՄՆ-ում և նրա առաջացրած՝ վճարունակ պահանջարկի կրճատումը ամերիկյան շուկան ել փակում է ճապոնական ապրանքների, գլխավորապես՝ Ճապոնիայից արտահանվող մետաքսի համար: Հայտնի յե, որ ճապոնական արդյունաբերության վճռողական եքսպորտային ապրանքը—մետաքսը—90%-ով արտահանվում է ԱՄՆ: Եքսպորտի կրճատման հետևանքով Ճապոնիայի հաշվեհարդար (расчетный) բալանսը պասսիվ է դառնում:

Ուստի և, ակներև է, որ մոտակա ժամանակներս մենք վկա կլինենք տնտեսական դրության սրման ինչպես Ճապոնիայում, այնպես և առանձնապես Գերմանիայում ու Իտալիայում:

Սակայն, ամենածանրը կլինի ագրարային, մանավանդ, գաղութային յերկրների դրությունը: Այդ յերկրների ապրանքները—բամբակը, բուրդը, կաուչուկը, կակաոն, անագը և այլն՝ իրենց գներով սաստիկ ընկել են, սրա հետ մեկտեղ տեղի յե ունենում արտադրության կրճատում: Գաղութային ապրանքների համաշխարհային մոնոպոլիաները կփորձեն գները պահել ընկնելուց՝ ռեստրիկցիաների, այսինքն՝ արտադրության սահմանափակման միջոցով: Ահա մի որինակ. Անագի (оловянный) միջազգային կարտելը դեկտեմբերի սկզբներին մեկեն իջեցրեց կոնտինգենտները 110-ից մինչև 70%: Կաուչուկի կոնտինգենտները նույնպես իջեցված են 90-ից մինչև 70%: Մյուս կողմից, խոշոր մոնոպոլիաները փորձում են պահել ապրանքների գների դոյություն ունեցող մակարդակը: Ցեվրոպական Պողպատի կարտելը 1937 թ. նոյեմբերի 24-ին վճռեց պահել հին գները 1938 թ. համար: Այդ, իհարկե, չի նշանակում, որ յեթե ճգնաժամը Ցեվրոպայում զարգանալու յե բուռն կերպով, ապա մոնոպոլիաները կարող կլինեն գները պահել, բայց համենայն դեպս պարզ յերևում է նրանց տենդենցը—կողոպտել գաղութային յերկրները, իջեցնել գաղութային



հումքի գները և բարձր մակարդակի վրա պահել իմպերիալիստական պետությունների մոնոպոլիաների գները:

Այսպես ուրեմն, տանք հանրագումարները:

Թեև 1938 թ. սկզբներին տակավին վոչ մի յերկրում, բացի ԱՄՆ-ից[1], չի կարելի վորոշակի հավատել ճգնաժամի ծագումը արտադրության վոլորտում,—թեև հսկայական ռազմական սպառազինումները մի շարք յերկրներում ստեղծում են արդյունաբերության համար հավելադիր շուկա և դրանով իսկ հեռացնում են ճգնաժամի ծագումը—բայց և այնպես, բոլոր նշանները խոսում են այն մասին, վոր 1938 թ. ընթացքում ամերիկյան ճգնաժամը կվերաճի համաշխարհային ճգնաժամի:

## ՆՈՐ ՃԳՆԱԺԱՄԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Վրա հասնող ճգնաժամը ի՞նչ ներգործություն կարող է անել կապիտալիստական պետությունների միջազգային և ներքին դրության վրա:

Ամենից առաջ հարկավոր է շեշտել, վոր կապիտալիստական աշխարհի ընդհանուր դրությունն այժմ բնավ նման չե 1929 թ. կացությանը: 1929 թ. դեռևս գոյություն ուներ կապիտալիզմի ստաբիլիզացիա, թեկուզ և այդ ստաբիլիզացիան արդեն սաստիկ խախտվել եր: Ներկայումս կապիտալիստական ստաբիլիզացիայի հետքն ել չի մնացել: Այժմ մենք գտնվում ենք արդեն պատերազմների յերկրորդ տուրի ժամանակաշրջանում: Չե վոր փաստ է, վոր մարդկության մի յերրորդ մասը, այն է՝ Հարեչստանի, Իսպանիայի, Չինաստանի, Ճապոնիայի և վորոշ չափով Իտալիայի ու Գերմանիայի բնակչությունը գտնվում է պատերազմի վիճակում: Պարզ է, վոր այս կացության մեջ համաշխարհային նոր տնտեսական ճգնաժամի ծագումը պետք է առաջացնի ավելի ևս մեծ քայքայում, քան 1929 թվականին:

Փողային սիստեմի ցնցումը, անվստահությունը բորսաներում, արժեքների անկումը միջազգային այն լարված իրադրության մեջ, վորն այժմ ապրում է ամբողջ աշխարհը, նշանակում են շուկաների համար մղվող պայքարի ել

1 Տե՛ս 39 եջում յեղած ծանոթագրությունը: Հայերեն խմբ.:

ավելի մեծ սրում, և՛ ավելի սուր ընդհարումներ պետութիւնների միջև, մի պետութիւն մյուսին և՛ ավելի չեշտակի կերպով հակադրելը, աղեցութիւնի վոլորտի ու զոնայի պայքարում նոր շուկաներ վորոնելիս:

Ճգնաժամը, հետևաբար, կսրի կապիտալիզմի բոլոր արտաքին հակասութիւնները, կարագացնի ռազմական ընդհարումները իմպերիալիստական պետութիւնների միջև, կմեծացնի համաշխարհային նոր սպանդի վտանգը:

Նոր ճգնաժամի վրա հասնելը անխուսափելիորեն կառաջացնի կապիտալիստական աշխարհի նաև ներքին հակասութիւնների սրում: Ճգնաժամի պայթումը իր հետ բերում է կապիտալիստական բոլոր յերկրների աշխատավոր մասսաների համար հետագա և՛ ավելի սարսափելի աղքատացում: 1929 թ. ճգնաժամի հետևանքները դեռևս բնավ էլ անցած-վերջացած չեն: Վորքան վոր վերջին ճգնաժամի պրոցեսում տեղի յեր ունենում արտադրության կատաղի ռացիոնալացում, և բանվորների նշանակելի մասսաներ բոլորովին դուրս նետվեցին ֆաբրիկաներից ու գործարաններից՝ խրոնիկապես գործազուրկների այս հին շերտերին ավելանում են մարդկանց առանց աշխատանքի մնացող նոր միլիոններ: Ուստի և, ճգնաժամը իր ներգործությունը կունենա կապիտալիստական յերկրների ներքին հակասությունների սրման, դասակարգային պայքարի սրման իմաստով ևս:

Այս բանը կարելի յե լուսաբանել թեկուզ ԱՄՆ-ի և Ֆրանսիայի որինակով:

Ամերիկյան խոշոր բուրժուազիայի քաղաքականությունը 1937 թվականին խիստ կերպով տարբերվում է 1929 թվականից: 1929 թ. խոշոր բուրժուազիան փորձում եր մեղմել ճգնաժամը, դուրս չնետել բանվորներին արտադրությունից, մեծացնել նոր ներդրումները շինարարության մեջ և այլն: Այդ քաղաքականությունը հաջողություն չունեցավ, բայց դիծն այսպիսին եր: Իսկ ներկայումս ամերիկյան խոշոր բուրժուազիայի մի մասն արդեն գնում է դեպի դրություն սրելու քաղաքականությունը. ձեռնարկատերերը հաղարավոր բանվորների փողոց են շպրտում, փորձում են ամերիկյան բանվորներին զրկել



վերջին տարիների նվաճումներից: Ինչպես հայտնի յե, ԱՄՆ-ի արտադրական արհմիությունները առաջին անգամ ձեռք բերին կոլեկտիվ պայմանագրերի ճանաչում ու կընքում ծանր արդյունաբերության մեջ: Այդ ամերիկյան բանվորական շարժման առաջին խոշոր նվաճումն է:

Կապիտալիստները այս բանին համաձայնվեցին այն պատճառով, վոր չեյին կարող թույլ տալ 1936-1937 թ. թ. վերելքի ձախողում, բայց նրանք կնքեցին միայն կարճաժամկետ պայմանագրեր, վորոնց ժամկետը լրանում է առավելագույն 1938 թ. առաջին կիսում: Այժմ նրանք հատատապես վճռել են մարտ տալ արհմիություններին: Սպառվում են դասակարգային սուր մարտեր:

Այսպիսին է դրությունը նաև Ֆրանսիայում: Շնորհիվ միասնական պրոլետարական ու ժողովրդական ֆրոնտի քաղաքականության՝ բանվոր դասակարգը ձեռք բերեց խոշոր հաջողություններ—40-ժամյա բանվորական շաբաթ, պայմանագրերի կնքում, վարձատրվող արձակուրդներ և այլն: Կապիտալիստները անկասկածորեն կփորձեն և արդեն իսկ փորձում են ոգտագործել տնտեսական դժվարությունները, ճգնաժամի սկսվելը, վորպեսզի զրկեն բանվորներին այդ նվաճումներից:

Հարկ կլինի, վոր կառավարող դասակարգերը յերես առ յերես բաղխվեն աշխատավորների ավելի լայն մասսաների հետ, վորոնց ճգնաժամը կբերի աղքատության ու սովի նոր տարսափներ: Բուրժուազիան, անկասկած, կփորձի ոգտագործել ճգնաժամը նրա համար, վոր նոր հարձակում սկսի բանվոր դասակարգի վրա: Նա կփորձի ճգնաժամի բեռը դցել բանվորների ու գյուղացիների վրա: Կարագացվի կապիտալի կենտրոնացման և մանր բուրժուազիայի քայքայման պրոցեսը: Ճգնաժամը կուժեղացնի դեմոկրատական յերկրների բուրժուազիայի ֆաշիստական տենդենցները: Ֆաշիստական բուրժուազիան կփորձի հակակապիտալիստական դեմագոգիայի, շովինիստական պրոպագանդայի միջոցով տանել իր հետևից մասսաները, առաջին հերթին՝ քաղաքի և գյուղի մանր բուրժուազիայի քայքայվող շերտերը: Ճգնաժամը կուժեղացնի ֆաշիզմի վտանգը Եվրոպայի և Ամերիկայի դեմոկրատական պետություններ-

ցում։ Բայց վերջվհետև վերջին տարիներում աճել բարձրացել է և խորը արմատներ է արձակել ժողովրդական հակաֆաշիստական ճակատի շարժումը, ուստի Ֆաշիզմի այդ փորձերը, անկասկած, կհանդիպեն ավելի վճռական հակահարվածի բանվոր դասակարգի և աշխատավոր մասսաների կողմից։ Դասակարգային պայքարը կբարձրանա նոր, ավելի բարձր մակարդակի վրա։

Ճգնաժամն անկասկածորեն կսրի հակասությունները իմպերիալիստական պետությունների և դաղութների միջև։

Խոշոր բուրժուազիան և ֆաշիստական ագրեսորները ե՛լ ավելի, քան մինչև այժմ, արագացնելու յեն համաշխարհային պատերազմի կապեր արձակելը,—մի պատերազմ, որի մեջ նրանք հույս ունեն յելք գտնել ներքին դժվարություններից։

Այն ժամանակ, յերբ կապիտալիստական յերկրները նախորդ ճգնաժամից անցած ութ տարում կարող եյին միայն լրացնել ճգնաժամի հասցրած վնասները, սոցիալիստական տնտեսությունն ե՛լ ավելի յե ամրապնդվել, մեծացել է արտադրությունը խորհրդային արդյունաբերության ու գյուղատնտեսության բառացի բոլոր ճյուղերում։ Այս հանդիսանում է տնտեսության սոցիալիստական սիստեմի կապիտալիստականի հանդեպ ունեցած գերազանցության ամենափայլուն ապացույցը։ Ուստի և այժմ, յերբ սոցիալիզմը Խորհուրդների յերկրում հաղթել է վերջնականապես և անդառնալիորեն, ռեակցիոն բուրժուազիան, պատերազմի ֆաշիստական հրձիգները, վորոնք պարտություն կրեցին յերկու սիստեմի—սոցիալիզմի և կապիտալիզմի «խաղաղ» պայքարում, ձգտելու յեն յելք վորոնելու իրենց հակասություններից հակահեղափոխական պատերազմում ընդդեմ Խորհրդային Միության։ Տակավին կուսակցության XVI համագումարում ընկեր Ստալինն ասել է, վոր «ամեն անգամ, յերբ սկսում են սրվել կապիտալիստական հակասությունները, բուրժուազիան իր հայացքը դարձնում է ԽՍՀՄ կողմը. արդյոք չի՞ կարելի կապիտալիզմի այս կամ այն հակասությունը, կամ բոլոր հակասությունները



միասին վերցրած՝ լուծել ի հաշիվ ԽՍՀՄ-ի»[1]։ Այժմ այդ հարցը դրված է ե՛լ ավելի սուր կերպով, քան մինչև այժմ։ Հետևաբար, ճգնաժամի հետագա զարգացմամբ կուժեղանա Խորհրդային Միության վրա հարձակվելու վտանգը։

Ամեն ինչ խոսում է այն բանի մասին, վոր նոր ճգնաժամի տարիները լինելու յեն աշխատանքի և կապիտալի միջև յուրաքանչյուր յերկրում ու միջազգային մասշտաբով մղվող պայքարի սաստիկ սրման տարիներ։

Ճգնաժամը կսրի կապիտալիստական սիստեմի բոլոր ներքին ու արտաքին հակասությունները, խորապես կցնցի կապիտալիստական սիստեմի հիմունքները և որահերթի կդնի այդ սիստեմի գոյության իսկ հարցը։

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՌ-Арм.ССР
Ա. ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

1 Ստալին, Լենինիզմի հարցերը, հայերեն թարգմ., Հկ(բ)Կ ԿԿ Գուսհրատ, յերկրորդ հրատ. 1937 թ., եջ 528։

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

Ինչո՞ւ կապիտալիզմի որով անխուսափելի յեն պարբերական ճգնաժամերը . . . . . 6
Կապիտալիստական շուկան և ճգնաժամերը . . . 10
Ինչո՞ւ ցիկլեր, և վոչ թե պերմանենտ ճգնաժամեր 20
Ինչո՞ւ ճգնաժամերն ավելի ու ավելի սուր, խորը և յերկարատև են դառնում . . . . . 26
1937 թ. ճգնաժամը ԱՄՆ-ում . . . . . 32
Սկսող ճգնաժամի սիմպտոմները մյուս յերկրներում 65
Նոր ճգնաժամի քաղաքական հետևանքները . . . 77

Թարգմ. Պ. Աբելյան
Խմբ. Ռ. Հովհաննիսյան
Սրբագրիչ Վ. Ջիդեջյան
Կոնտրոլ սրբ. Լ. Աբովյան

Գլավլիտի լիազոր 3303, հրատ. № 589
Պատվեր № 115, տիրաժ 10,000
Հանձնված է արտադրության 21/VI 1938 թ.
Ստորագրված է տպագրելու 28/VII 1938 թ.
Գինը 75 կ.

Պետհրատ— Քաղաքական գրականության հրատարակչության տպարան, Երևան, Սլավերդյան № 65.

ՀՀ Ազգային գրադարան
NL0977595

9 АВГ. 1938
ԳԻՆԸ 75 կ.
407
11
28458

Е. ВАРГА

# КАПИТАЛИСТИЧЕСКИЙ МИР НА ПОРОГЕ НОВОГО КРИЗИСА

Армгиз—Издательство полит. литературы
Ереван, 1938